

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱՅԻՆՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան տարեդարձի առթիվ



Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պաշտոնավարող եպիսկոպոսները եւ միաբանության անդամները, Մայր Աթոռի կառույցներում սպասավորող քահանաներն ու պաշտոնեությունը, ինչպես նաեւ վերապատրաստման դասընթացներին մասնակցող տարբեր թեմերի քահանաներն այցելեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շնորհավորելու ծննդյան տարեդարձի բերկրալի առիթով:

Հայոց Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացյալ ժողովրդի անունից իրենց շնորհա-

վորանքները բերելով Հայոց Հայրապետին՝ Եկեղեցականներն ու աշխարհականները հայցեցին Երկնավոր Տիրոջ զորակցությունը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի գահակալին եւ մաղթեցին կենաց արեւշատություն ու արդյունավոր հովվապետություն՝ ի պաշտառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի:

Նորին Սրբությունը, իր երախտագիտությամբ հայտնելով ջերմ խոսքերի եւ բարի մաղթանքների համար, ամենքին բաշխեց

հայրապետական իր օրհնությունը: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ուղղեց՝ ազգին եւ Եկեղեցուն մատուցվող ծառայության մեջ իրեն լծակից հոգեւոր դասին՝ ամբողջանվեր սպասավորության համար, որով առավել զորանում է Հայոց Եկեղեցին՝ իր տերունավանդ առաքելության մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակությամբ փաստեց Մայր Աթոռի պաշտոնեության անսակարկ նվիրումն ու զորակցությունը Հայոց Հայրապետին՝ աշխարհասփյուռ ազգային-հոգեւոր

կյանքի շինությանն ուղղված օգտաշատ գործունեության մեջ:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց նրանց հոգու ամրությունն ու հավատքի զորությունը եւ, մաղթելով Աստծո ս. Աջի հովանին ամենքին, պատգամեց առավել նախանձախնդրությամբ ու հանձնառու ոգով շարունակել իրենց օրհնյալ ծառայությունն ազգին, հայրենիքին եւ Հայոց Եկեղեցուն:

Տարեդարձի կապակցությամբ Մայր Աթոռում ստացվեցին բազում շնորհավորական ուղերձներ եւ գրություններ:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



19 օգոստոսի **ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Նյու Յորքի Սրբոց Նահատակաց Եկեղեցու շուրջ 30 ուխտավորի՝ առաջնորդությամբ Եկեղեցու հոգեւոր հովիվ Աբրահամ քին. Մախսայանի:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ տեր հայրն իր երախտագիտության խոսքերն ուղղեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ նշելով, որ ուխտավորների մեծ մասն առաջին անգամ է Հայաստանում: Տեր Աբրահամը հովանավորեց իրենց ներկայացրեց նաեւ համայնքի կյանքը,

անդրադարձավ ամենօրյա, շաբաթօրյա եւ կիրակնօրյա դպրոցների գործունեությանը, որոնց շնորհիվ հայորդիները հաղորդ են դառնում մայրենի լեզվին ու հայ մշակույթին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունը բաշխեց հավատացյալ ուխտավորներին՝ կարեւորելով նրանց այցը հայրենիք: Նորին Սրբությունը խոսեց յուրաքանչյուր հայորդու կյանքում Ս. Էջմիածնի դերի եւ կարեւորության մասին, ապա անդրադարձավ ազգի առաջ ծառացած մարտահրավերներին, որոնց հայը դիմագրավում է իր հոգեւոր ներուժի եւ հավատքի միջոցով:

Վեհափառ Հայրապետը բերկրանքով արձանագրեց, որ իր ԱՄՆ այցելությունների ընթացքում մշտապես նկատել է հայ համայնքի հոգեւոր ծաղկուն վիճակը՝ դրանում նկատելով նախկին եւ ներկա հոգեւոր հովիվների վաստակը: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը բերեց Աբրահամ քահանային՝ նվիրյալ եւ արդյունաշատ ծառայության համար: Նորին Սրբությունը նաեւ կարեւորեց այն հետեւողականությունը, որով հայերը հետագա սերունդներին են փոխանցում հայոց լեզուն եւ բազմադարյա հայ մշակույթը՝ հորդորելով նույն նախանձախնդրությամբ եւ ջերմեռանդությամբ շարունակել իրենց նվիրյալ ծառայությունը:

Հանդիպման վերջում հավատացյալ-

ներն իրենց հարցերն ուղղեցին Վեհափառ Հայրապետին, որոնք վերաբերում էին միջ-Եկեղեցական հարաբերություններին եւ ներհայաստանյան զարգացումներին: Անդրադառնալով հայաստանյան վերջին իրադարձություններին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին ներկայացրեց իր դիտարկումները, ապա լուսավոր Հայաստանի կերտման գործում կարեւորեց ՀՀ իշխանությունների, Եկեղեցու եւ ժողովրդի միասնական ջանքերն ու հանձնառության ոգին:

Հանդիպման վերջում Աբրահամ քահանան Վեհափառ Հայրապետին փոխանցեց Կարապետյան ընտանիքի նվերը Սուրբ Էջմիածնին՝ Մխիթար վրդ. Սեբաստացու աշխատասիրությամբ 1733 թվականին տպագրված Աստվածաշունչը:

24 օգոստոսի «Ախլցխա» պարային համույթի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վիրահայոց թեմի Ախլցխիսի հոգեւոր տեսչության հովանու ներքո գործող «Ախլցխա» պարային համույթի սաներին՝ առաջնորդությամբ Հակոբ աբեղա Սահակյանի:

Հայր Հակոբը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ համույթը ծրագրում է չորսօրյա պտույտ կատարել Արցախում եւ հանդես գալ կատարումներով, ապա հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց

համույթի նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ նրանց ելույթները մեծ բավականություն կպատճառեն արցախցիներին եւ կոզելուրեն: Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ համույթի անդամներն իրենց հերթին ամոռանալի օրեր կանցկացնեն Արցախում, կբաշխեն ու կգործանեն՝ տեսնելով տեղի ժողովրդի անկոտորում հավատքը եւ դժվարությունների դեմ չընկրկելու հանձնառությունը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



«Ախլցխա» պարային համույթի սաներին

Սկիզբը՝ էջ 1

Գարեգին Բ Վեհափառը, իր հայրական օրինությունը բերելով պատանիներին, գնահատեց ազգային ինքնությունը, մախնյաց հավատը եւ սրբազան ժառանգությունը պահպանելու գործում նրանց մախանձախնդրությունը: Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին շարունակել ապրել ազգային ոգով ու գիտակցությամբ:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց

Վիրահայոց թեմի առաջնորդարանին, Ախլցիսի հոգևոր տեսչությանը եւ բարերար հայորդիներին՝ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ հայրենիք՝ նման ուխտագնացությունների կազմակերպման համար:

Հանդիպման ընթացքում պատանի ախլցիացիներն իրենց երաժշտական կատարումներով եւ ազգային պարերով ուրախացրին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ արժանանալով նրա գնահատանքին եւ պարգևներին:

25 օգոստոսի

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլերին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելի հետ:

Ողջունելով բարձրաստիճան հյուրին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ Գերմանիայի կանցլերի այցը Հայաստան նոր խթան կհանդիսանա երկու երկրների գործակցային հարաբերությունների զարգացման եւ արդյունավորման համար:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ քաղաքական կյանքում տեղ գտած փոփոխություններին՝ նշելով, որ, իբրեւ Քրիստոսի հավատացող ժողովուրդ, մեր ժողովուրդը հույսով ու լավատեսությամբ ջանքեր է ներդնում կերտելու իր խաղաղ, ապահով եւ բարձր կյանքը, պատրաստակամ՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները: Հայոց Հայրապետը հաստատեց, որ Հայոց Եկեղեցին եւս պիտի շարունակի ըստ ամենայնի ջանքեր գործադրել այս ուղղությամբ՝ դրանում զորակից լինելով նաեւ ՀՀ իշխանություններին:

Գարեգին Բ Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց Գերմանիայի ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար՝ հաստատելով, որ միայն այդ ճանապարհով է հնարավոր բացառել աշխարհում այդօրինակ նոր ոճիրները:

Տիկին Անգելա Մերկելն իր հերթին ուրախություն արտահայտեց հայ ժողովրդի հոգևոր կենտրոն այցի հնարավորության համար՝ լինելով Ս. Էջմիածին եւ Հայաստան այցելող Գերմանիայի առաջին կանցլերը:

Կանցլեր Անգելա Մերկելը Նորին Սրբությանը ներկայացրեց այցից եւ հանդիպումներից ստացած իր տպավորությունները: Նա գոհունակությամբ փաստեց, որ իր այցը համընկավ Հայաստանում տեղ գտած փոփոխություններին՝ հաստատելով, որ Գերմանիան ցանկանում է այդ ճանապարհին բարեկամ ու գործընկեր լինել եւ վերահաստատում է պատրաստակամությունը՝ ընդլայնելու գործակցությունը տարբեր ոլորտներում:

Զրույցի ընթացքում քննարկված մի շարք թեմաների մեջ առանձնացվեց Հայաստան-

նյայց Առաքելական Եկեղեցու եւ Գերմանիայի Կաթոլիկ եւ Ավետարանական Եկեղեցիների հետ գործակցությունը: Վեհափառ Հայրապետն ի դեմս կանցլեր Անգելա Մերկելի նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Գերմանիայի իշխանություններին՝ հայկական համայնքի համդեպ դրսևորվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին նաեւ դարաբաղյան հակամարտության ներկա վիճակի առնչությամբ: Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունն արտահայտեց Ադրբեջանի դեկավարության կողմից չդադարող ռազմատենչ հայտարարությունների կապակցությամբ, ինչը մեծապես վտանգում է հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարները: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անթույլատրելի նկատեց Ադրբեջանի կողմից հայության հանդեպ ատելության եւ թշնամանքի հրահրումը: Վեհափառ Հայրապետը Գերմանիայի կանցլերին նվիրեց ներկայիս Ադրբեջանի տարածքում հայկական պատմամշակութային եւ հոգևոր արժեքների հետևողական ոչնչացման մասին պատմող մի գիրք:

Տեղեկացնելով դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ կազմակերպվող երկու երկրների հոգևոր առաջնորդների հանդիպումների արդյունքների մասին՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ միջազգային հանրության ջանքերով դարաբաղյան հիմնախնդիրը կգտնի իր խաղաղ կարգավորումը:

Հանդիպմանը նաեւ մտահոգություն արտահայտվեց Թուրքիայում քրիստոնեական փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման վերաբերյալ:

Գերմանիայի կանցլերը, կիսելով ներկայացված մտահոգությունները, հաստատեց, որ Գերմանիայի կողմից եւս ջանքեր կգործադրվեն նպաստելու համար արձարծված խնդիրների հանգուցալուծմանը: Տիկին Անգելա Մերկելը հանդիպման ընթացքում նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Սիրիայից փախստականներ ընդունելու եւ նրանց աջակցելու համար:

Զրույցին ներկա էին ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն

Նաթան արք. Հովհաննիսյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերոբյան վրդ. Իսախանյանը եւ երկու երկրների դեսպանները:

Հայ-գերմանական ֆորումի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի պատգամավոր, հայ-գերմանական ֆորումի նախագահ Ալբերտ Վայներին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց պատգամավորի այցը Հայաստան՝ շնորհակալություն հայտնելով նրան դարաբաղյան հակամարտության առնչությամբ դրսևորած իր քաջարի ու արդար կեցվածքի եւ մարդասիրության համար:

մաններից դիպուկահարների հեռացումը, որպեսզի չընդհատվեն երիտասարդ կյանքեր ու չղժբախտանան նորանոր ընտանիքներ:

Նորին Սրբությունը պրն. Վայներին տեղեկություններ փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքի միջնորդությամբ դարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանն ի նպաստ կազմակերպվող Հայաստանի եւ Ադրբեջանի հոգևոր առաջնորդների համդիպումների մասին:



Նորին Սրբությունը հաստատեց, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից որդեգրված ժխտողականությունը երբեք չի կարող լինել խնդիրների լուծման, ժողովուրդների եւ երկրների համերաշխության հաստատման ճանապարհ:

Իր հերթին պատգամավորն անդրադարձավ հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերին: Վերջինս կարեւորեց խաղաղության հաստատումը շփման գծում, սահ-

Այս կապակցությամբ զրուցակիցները բարձր գնահատեցին խաղաղասեր եւ բարեսեր բոլոր մարդկանց եւ պետությունների ջանքերը՝ ի խնդիր խաղաղ ու ապահով աշխարհի կերտման:

Վեհափառ Հայրապետը նաեւ շնորհակալություն հայտնեց Գերմանիայի իշխանություններին այն զորակցության համար, որ ցուցաբերվում է պատերազմների արհավիրքներից տուժածներին:

27 օգոստոսի

Բուժումից վերադարձած զինվորականներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԶՈՒ հինգ զինծառայողների, որոնց վերջույթների պրոթեզավորումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության աջակցությամբ կազմակերպվել էր Հնդկաստանում:

Հանդիպմանը ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Վրթանես Եպս Աբրահամյանը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց, որ զինվորականները ստացել են անհրաժեշտ բուժումը եւ վերադարձել հայրենիք՝ պատրաստակամորեն շարունակելու իրենց ծառայությունն ազգին եւ հայրենիքին: Սրբազանը նաեւ հավելեց, որ վիրավոր զինվորներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող աջակցության այս ծրագրի շրջանակներում տարվա ընթացքում նախատեսված է պրոթեզավորել տասնվեց զինվորականին:

Երիտասարդ սպաներն ու զինվորները խորին շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իրենց բուժումը Հնդկաստանում կազմակերպելու համար՝ ընդգծելով, որ իրենց առավել ուժ եւ զորություն է հաղորդում այն իրողությունը, որ Հայոց Եկեղեցին հայ զինվորականի կողքին է իր աջակցությամբ: Նրանք մասնավոր գոհունակությամբ նաեւ հաստատեցին իրենց նկատմամբ Կալկաթայի հայոց մարդասիրական ծեսմանում դրսևորված ջերմ հյուրընկալությունը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով հայրենյաց պաշտպաններին, հետաքրքրվեց նրանց առողջական վիճակով եւ բուժման արդյունավետությամբ:

«Մենք մեր խոնարհումն ենք բերում ձեզ եւ մեր Հայոց բանակի զինվորներին: Ազգը սիրում է գնահատում է իր զինվորներին եւ պատրաստ է ամեն հանձնառության հանուն ձեզ եւ Հայոց բանակի», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ արձանագրելով, որ ցուցաբերվող զորակցությունը նվազագույնն է, որ Մայր Աթոռը կարող է անել հայրենիքի եւ հայ ժողովրդի հանդեպ նվիրական պարտքը կատարելու ժամանակ ծանր վիրավորում ստացած զինվորականների համար:

Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հպարտ է նման արի զավակներով, ովքեր պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել հանուն հայրենիքի: Իր շնորհակալությունը հայտնելով հայորդիներին՝ իրենց քաջարի ոգու եւ հայրենասիրության համար՝ Նորին Սրբությունը հավաստիացրեց, որ Մայր Աթոռը պիտի շարունակի իր օգտակարությունը բերել մարտական գործողություններում վիրավորում ստացած զինվորներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց զինվորներին, նաեւ աղոթեց, որ որեւէ հայորդի հարկադրված չլինի իր կյանքը վտանգել հայրենիքի խաղաղ ու անվտանգ կյանքի համար:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)

ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ- ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՈՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ» ՎԵՐՔ

Այս գլուգործոցի քննությունը պետք է սկսել վեր-
նագրից. ինչն «Վերք Հայաստանի»։ Ժամանակին
Արովյանի եւ նրա վեպի առաջին արժեւորող Միք.
Նալբանդյանը ճիշտ մոտեցումով երկը գնահա-
տեց որպես «արդյան ազգային վիպասանության»
հիմքերից մեկը եւ ուշադրություն հրավիրեց նրա
վերնագրի վրա՝ մատնացույց անելով Հայաստանի
բազում վերքերը եւ ընդգծելով գլխավորը։ Այս վե-
պով Արովյանը հայ գրականություն էր բերում հայ
ժողովրդին կործանարար միջոցից արթնացնելու,
մաքառման ու գոյատեւման մի ամբողջ կենսա-
փիլիսոփայություն, համատարած մեռելային ան-
շարժության մեջ՝ տեղ-տեղ կյանքի խլրտում, որ
առաջացնում էին Աղասին ու իր հերոս ընկերնե-
րը։ Նրանց երակներում է հոսում հայության ջերմ
արյունը, սակայն նրանք, ցավոք, «ընդհանրական
չեն» ամբողջ ազգի համար եւ շրջապատված են
սառնարյուն մարդկանցով։

Ստեղծագործական պատմությունը։ Արվեստի
մեծ, բեկումնային մշակակություն ունեցող հզոր

գործերը միանգամից չեն ստեղծվում, այլ նախա-
պատրաստվում են որպես մարդկային նախորդ
ամբողջ քաղաքակրթության զարգացման ար-
դյունք, եթե նույնիսկ գրվում են միանգամից եւ ար-
ծարծում հույժ արդիական խնդիրներ։ Մինչ այդ՝
հեղինակներն անցած են լինում ստեղծագործա-
կան որոշակի ճանապարհ ու հասունացում՝ մարդ-
կային ամբողջ քաղաքակրթության յուրացումով,
ինչպես բանաձեւել է Մ. Բախտինը։ Խ. Արովյանն էլ
է անցել այդ ուղիով՝ նախքան իր համաճարեղ վեպը
գրելու համար հասունանալը։

Գրողի գեղարվեստական մտածողության
զարգացման, այդպիսի երկ ստեղծելու նախա-
պատրաստական շրջանն ընդգրկում է մի քանի
էական բաղադրատարրեր՝ մտահղացման ներ-
քին հիմնավորում, գաղափարական ու գեղա-
գիտական ծրագրերի հստակեցում, կենսական
երեւոյթների ու հանգամանքների խոր ճանա-
չողություն, ժողովրդի համար պատկերվող դա-
րաշրջանի, կենսական ու ճակատագրական կա-
րեւորագույն մշակակություն ունեցող դեպքերի եւ
իրադարձությունների ճիշտ ընտրություն, թեմայի,
ժանրի, լեզվի ու ոճի, կերպարային համակարգի
որոշակիացում եւ գեղարվեստական համոզու-
թյան հասնելու անհրաժեշտ գրական վարպետու-
թյուն։ Հասկանալի է՝ 1820-30-ական թթ. Խ. Ար-
ովյանը դեռեւս այս հատկանիշների համակարգն
ամբողջությամբ չէր յուրացրել եւ պատրաստ չէր
վեպ, մանավանդ «Վերք Հայաստանի» գրելու,
ուստի վեպից առաջ Աղասու մասին գրում էր բա-
նաստեղծություններ, անգամ «Աղասու խաղը»
վերնագրով 7108 տողանոց մեծածավալ մի պո-
եմ։ Թեւեւ այն անավարտ է, սակայն կռահելի է
նրա վերջնական տեսքը։ Ամեն ինչից երեւում է,
որ Խ. Արովյանը կամեցել է ստեղծել միջնադա-
րյան վիպերգերի մեծ չափածո դիպաշարային
մի երկ, որը ճակատագրական իրադարձություն-
ների պատկերման հետ միասին ամսագործ
արտահայտեր իր զգացմունքների բազմերանգ
ճոխությունը։ Կամեցել է, որ այն, որպես երգվող
ասք կամ վիպասանություն, լայնորեն տարածվի
ժողովրդի մեջ, նույնիսկ աշուղների մեծ մեկ է
երգելու եղանակը՝ «Բեշիշ օղլու գունով»։

Շարունակությունը՝ էջ 4

Վարդապետական թեզի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Օգոստոսի 29-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տե-
ղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն։ Մասնավոր վար-
դապետական աստիճան ստանալու համար «Հոգեւոր հովվի եւ համայնքի
միջանձնային փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական առանձ-
նահատկությունները» թեմայով թեզ պաշտպանեց Մայր Աթոռի միաբան
Տիրայր արեղա Հակոբյանը, ով ներկայում ուսանում է Հռոմի Պապական
Գրիգորյան համալսարանում։

Պաշտպանությունը սկսվեց Տերունական աղոթքով, ապա ներկաներին
ողջունեց համաձայնողի նախագահ, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ
Եպս Գալստամյանը։ Սրբազան հայրն ընդգծեց նյութի եզակիությունը եւ
կարեւորությունը եկեղեցի-հասարակություն, հովվի-համայնք փոխհարա-
բերությունների տեսանկյունից։

Թեզի գրախոսությամբ ելույթ ունեցավ հոգեբանական գիտ. դոկտոր
Կամո Վարդանյանը, որից հետո հայր Տիրայրը ներկայացրեց իր վարդա-
պետական թեզը, պարզաբանումներ տվեց ներկայացված դիտարկումնե-
րի առնչությամբ։

Բանավոր պաշտպանությունից հետո քննիչ հանձնախումբը դրական
եզրակացություն տվեց թեզի վերաբերյալ եւ արժանի համարեց Տիրայր
արեղա Հակոբյանին շնորհելու մասնավոր վարդապետության աստիճան։

Առաջիկա օրերին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Օշակա-
նի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում կկատարվի մասնավոր վարդապետա-
կան աստիճանի տվչության արարողությունը։

Նոր նշանակումներ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիած-
նի միաբան եղիշե վրդ. Ավետիսյանը, ազատվելով Շվեդիայի հայոց հովվի
պարտականություններից, ծառայության է կոչվել Գերմանիայի հայոց թե-
մում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո։

Տաճատ վրդ. Ծատուրյանը, ազատվելով Լեհահայոց հոգեւոր հով-
վի պարտականություններից, ծառայության է կոչվել Երուսաղեմի Հա-
յոց Պատրիարքությունում՝ որպես ժառանգավորաց վարժարանի տեսուչ՝
Երուսաղեմի Հայոց Պատրիարքի իշխանության ներքո։

Ներսես արեղա Հարությունյանը, ազատվելով Վանքից տեսչությունում
ստանձնած պարտականություններից, իր հոգեւոր սպասավորությունը
կշարունակի Լեհաստանում՝ որպես Լեհահայոց հոգեւոր հովվի։

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հայր Միքայել վրդ. Զամչյանցի՝ ամենապատիվ Մխիթար Աբբախոր աշակերտներից

**1. Երանելի է այդ որ ոչ գնաց ի խոր-
հուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մե-
ղաւորաց նա ոչ եկաց, եւ յաթոռս ժանտից
նա ոչ նստաւ։**

(Երանելի է այն մարդը, ով ամբարիշտնե-
րի խորհրդով չի շարժվում, մեղավորների
ճանապարհին ոտք չի դնում եւ չարագործ-
ների հետ համախոհ չի լինում)։

Մարգարեն, նայելով մարդկային բնու-
թյանը, իր խոսքն սկսում է երանությամբ,
որին պետք է հասնել իմանալով նախ, թե
որն է բարին եւ որը՝ չար, եւ թե ինչ է պետք
խնդրել եւ ստանալ։ Արդ, մարդկային բնու-
թյունը միշտ ցանկանում է երանության
հասնել՝ այդպիսով վայելելով բարին, որի
միջոցով էլ հանգիստ գտնելով՝ հագեցնում
է իր բաղձանքները։ Եվ քանի որ մարդը
ձգտում է բարուն, ամեն ինչում փափագում
է վայելել բարին կամ բարու լիությունը,
ապա՝ այս ամենից մղված ամեն ինչի դի-
մուն, որպեսզի գտնի այն եւ եթե մի իրի մեջ
գտնում է մասնակի կամ չափավոր բարին,
դրանով չհագեցնալով, ինչպես ծարավածը,
ցանկանում է գտնել ամբողջությամբ։ Եվ
թեւ ինքը չի զգում, որ դա է ցանկանում,
բայց քանի որ նրա բաղձանքներն ընդու-
նակ են ամենայն բարիի եւ այդ ընդունա-

կությունից ելնելով՝ սկսում է փնտրել այն,
հառաչել եւ խնդրել, ապա՝ չգտնելու դեպ-
քում մնում է ծարավ։

Իսկ եթե ճշմարտապես ուզում է գտնել,
պետք է նա այն բարին փնտրի եւ հաստա-
տի իր սրտում, որն անչափելի է եւ անսահ-
ման, որի ժառանգություններ լիանալով եւ
անդորրություն գտնելով՝ երանելի լինի։ Եվ
քանի որ միայն Աստված է անսահման բա-
րի, ապա, եթե մարդը ցանկանում է երա-
նելի լինել, պետք է նա Աստծուն հարի եւ
նրանում հաստատվելով՝ անմիջապես ժա-
ռանգի այն։ Իսկ որպեսզի հարի Աստծուն՝
որպես երանելի ժառանգություն տվողի,
պետք է նախ հեռանա այն ամենից, ինչը
հակառակ է Աստծուն եւ ապա ամբողջո-
վին Աստծուն լինի։ Սա կրկնակի կարող
է լինել՝ կատարյալ եւ անկատար։ Կատա-
րյալ է լինում հանդերձյալում, որտեղ հո-
գին ազատ է ամեն չարից, ամբողջովին
միանում է Աստծուն՝ տեսությամբ եւ էու-
թյամբ ու զմայլվում Նրա ամառ փառքով։
Իսկ անկատար է լինում այս կյանքում, երբ
մարդը բարոյապես Աստծուն է, այսինքն՝
հեռանալով այնպիսի չարից, որը դեմ է
Աստծո օրենքներին եւ առնելով այնպի-
սի բարի, որն ըստ Աստծո օրենքների է եւ



դրանում հաստատվելով՝ միավորվի Աստ-
ծո հետ եւ ժառանգելով ծայրագույն բարին՝
այս կյանքում լինի երանելի։

Ոմանք գտնում են, որ Սաղմոսի այս
խոսքերը վերաբերում են այն կատարյալ
երանություններին, որոնք լինելու են հան-
դերձյալ կյանքում։ Այս կարծիքին է մատ-
նակ Վարդանը [Բարձրաբերդցի]։ «Մարգարեն
չասաց, թե երանելի է այն մարդը, որ չի
գնում, այլ՝ որ չգնաց, որովհետեւ քանի դեռ
այս կյանքում է, երանելի չէ, քանզի չգի-
տեմք, թե ինչպիսի վախճան է ունենալու,
իսկ երբ արդեն [բարի վախճանով] հեռացել
է այս կյանքից, արդեն կարելի է նրա մասին
երանելի ասել»։ Բայց Սաղմոսի ընթացքը
ցույց է տալիս, որ կենաց երանությանը հա-
րելու մասին է խոսքը՝ հեռանալով չարից եւ
բարիք գործելով։ Չարից հեռանալու մասին
է ասում։ «Ամբարիշտների խորհրդով չի
շարժվում, մեղավորների ճանապարհին
ոտք չի դնում եւ չարագործների հետ հա-
մախոհ չի լինում»։ Եվ բարին գործելու մա-
սին է ասում։

**2. «Այլ հաճույք է ստանում Տիրոջ
օրենքներից եւ գիշեր-ցերեկ խորհում է
Նրա պատվիրանների մասին»։**

Շարունակությունը՝ էջ 5

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 15

Տարածաժամանակային ընդգրկումը

Գրողը ջերմությամբ է պատմում իր ծննդավայր Խաչենի, նրա բնաշխարհի մարդկանց, հայարտությամբ խոսում նախնիների մասին: Մանկության հիշողությունների շղթայում ներկայացված է հոր եւ որդու բախումը, որ ընտանեկան վեճերի ու անվերջանալի անախորժությունների պատճառ էր դարձել: Հուշագրողը տարիների հեռավորությունից ներկայացնում է իր մանկությունը, դժվարություններով լեցուն բարդ կյանքը: Նա պարծանքով է խոսում իր պապի՝ Աղանց Վեդու մասին, ով զաղթել էր Խաչենի Սեդիշեն գյուղից: Ավելի վաղ «Արություն եւ Մանվել» ինքնակենսագրական վեպում իր պապի մասին խոսելիս գրում է. «Նա գրագետ մարդ էր, եւ զարմանալի բանն էլ եղ էր, որովհետեւ հասարակ գրագետ չէր, հայոց պատմության տեղյակ մարդ էր, մինչդեռ նրա ժամանակի հոգեւորականները պատմությունից ոչ մի տեղեկություն չունեին» (հ. 1, էջ 54):

1878-ին Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին, Աղայանը հնարավորություն ունեցավ լինելու այդ գյուղում, տեսնելու Աղանց աղբյուրը, ձորը, բաղն ու ընկուզենին: Իր ծննդյան տարեթվի հետ կապված՝ Աղայանը հիշատակում է Ակոռի երկրաշարժը, որ եղել է 1840-ին. «Այդ ժամանակ ծննդյան մատյաններ պահելու սովորություն չկար. մեկի ծննդյան տարին հիշում էին նույն տարին պատահած մի որեւէ նշանավոր դեպքով: Իմ ծննդյան տարին նշանավոր դեպքը եղել է այն, որ Մեծ-Մասիսը շարժվել է եւ Ակոռին տակովն արել, իսկ այդ պատահել է 1840 թվականին» (հ. 4, էջ 326):

Հեղինակի՝ մանկության եւ պատանեկության հիշողություններին հանդիպում ենք նաեւ «Արություն եւ Մանվել» վեպում: Այստեղ ուշագրավն այն է, որ հեղինակը տարիներ հետո նկատում է վիպական

հյուսվածքի «բացթողումները» եւ հուշագրության ժանրի միջոցով կատարում որոշ հավելումներ: Ազդեցիկ է հատկապես մանկական տարիների՝ վեպում զանց առնված սիրահարության պատմությունը, որն էլ հոր հետ իր ընդհարման ու դժվարին դեգերումների պատճառ էր դարձել: Հայրը՝ Ավետիքը, հուշագրության էջերում առհասարակ ներկայացվում է որպես դաժան, կամային ընդգծված հատկություններ ունեցող, խստակենցաղ ու խիզախ մի մարդ, որն ի վիճակի չի եղել հասկանալու ձիրքաշատ որդու նրբին ապրումները:

Հոր ճիշտ հակապատկերն էր բարեհամբույր մայրը՝ Հռիփսիմեն՝ Տեր-Անդրիասյանների ընտանիքից: Նա տիպական հայ կնոջ կերպար էր, որն անախորժությունների եւ վեճերի ժամանակ փորձում էր մեղմել ու խաղաղեցնել ընտանեկան հարաբերությունները՝ երբեմն որդուն ուղղված հարվածներն իր վրա «վերցնելով»: Ընտանիքի անդամներին հիշելիս Աղայանը կարծես սակավախոս է. «Մի ոյուծին զավակ բերավ մայրս՝ չորս տղա եւ ութ աղջիկ, որոնցից չորսն իրան էին նման, իսկ ութը՝ հորս: Այժմ ողջ ենք չորս եղբայրքս միայն եւ չորս քույրս» (հ. 4, էջ 343):

Իր համագյուղացի Մայիկոյին սիրահարվելը, նրա հետեւից սարերում թափառելը պատճառ են դառնում, որ հայրը պատանի Ղազարոսին վռնի տնից: Հետաքրքրական է, որ գրողը պատկերում է մանկության հիշողություններում տպավորված սոցիալական անհավասարությունը, որ դրսևորվել էր ծնողների միակ զավակի՝ Մայիկոյի մասին պատմող հատվածում: Հուշագիրը նրբորեն նկատում է, որ աղջնակը միշտ խնամված էր, զուգված-գարդարված, որն էլ ավելի էր մեծացնում նրա բնատուր հմայքն իր աչքում: Այդ սերը դառնում է «նախագեղարվեստական սիրո երգերի» սկիզբ, եւ հուշագիրն իր զգացածը նմանեցնում է Քյարամի եւ Ասլի ազնիվ սիրո ապրում-

ներին: Մանկական առաջին զգացմունքը, որի մասին Աղայանը մեծ ոգեւորությամբ է խոսում, սխալ է ընկալվում իր ընտանիքում. ծնողները կարծում են՝ Մայիկոյի մայրը կախարդել է իրենց որդուն, եւ սկսվում է նրա նկատմամբ հալածանքի ակիքը: Ավելի ուշ նա հիշում է քրոջ՝ Հերիքնազի հարեւանությամբ ապրող Մայիկոյին, որն արդեն հարսներ ու թոռներ ուներ: Մայիկոն երբեմն-երբեմն հարցնում էր Ղազարոսի առողջության մասին՝ խուսափելով վերջինիս հետ հանդիպումից: Տերտերի կամ հոր համդիմանությունները ոչ թե մեղմացնում, այլ, ընդհակառակը, ավելի էին սաստկացնում մանկան հոգում բույն դրած սիրո առաջին սրտմաշուկ զգացումը: Մանկական սիրահարության դառը պտուղները ճաշակած որդին հոր կողմից երկրորդ անգամ է վռնդվում տնից՝ իբրեւ «աստծու ծրից դուրս եկած անառակ որդի»: Սա խոր հիասթափություն եւ հոգեբանական անկումներ է առաջացնում պատանու փոթորկուն հոգում: Նա իրեն մեղավոր է զգում այդ անմեղ զգացմունքի համար եւ ապավինում Աստծու ողորմածությանը. «Տէր, մի յիշեր զմեզս մանկութեան իմոյ...» (հ. 4, էջ 330):

Մարդկային բարդ փոխհարաբերությունները Ղազարոսին անժամանակ հասունացնում են, ստիպում հասկանալ ավելին, քան պետք էր այդ տարիքում: Այս դեպքում հերոսն անջատվում է այն միջավայրից, որ կաշկանդում է արգելք՝ իր հանդիսանում լուսավորության եւ առաջընթացի համար: Նա ձգտում է տարբերվել բոլորից եւ ինքնուրույնության մղումով հասնել կատարելության: Հուշագիրը գտնում է, որ ինքնուրույնությունը «մի կաղապարով ձուլված հասարակությունից» տարբերվելու մեջ է: Իր թափառական եւ դժվարին կյանքի մասին հետագայում ահա ինչ է գրում Աղայանը՝ փիլիսոփայական խորհրդածմամբ. «Ես ընկա երկրիս օվկիանոսը, ինչպես մի հեքիաթական աշխարհի մեջ, ինչպես մի



առասպելական, այլ ոչ իրական կյանքի մեջ: Այդ կյանքի հետ ես բնավ ծանոթություն չունեի, դրսի կեղեւն էի տեսել եւ շատ հավանել, բայց չգիտեի, որ նա մի զարդարուն գերեզման է, չգիտեի, որ նրանում զարհուրելի գազաններ եւ միջատներ կան...» (հ. 4, էջ 331):

Հարուստ եւ բովանդակալից է գրողի պատկերած կյանքը՝ լեցուն միջավայրի եւ դեպի ուսումը ձգտող անհատի՝ այդ նույն միջավայրի քարացած բարքերի դեմ պայքարով, նոր աշխարհը ճանաչելու եւ այնտեղ իր տեղը գտնելու որոնումներով: Հարթ չի եղել Աղայանի անցած ուղին: Խավարի մեջ թաղված հայ գյուղի հարազատ զավակի՝ ուսման նկատմամբ ունեցած անհագ ծարավը պատանի Ղազարոսին որդուն է համարձակ քայլերի: Նա կարողանում է տեսնել իրականության բացասական այն կողմերը, որոնք խոչընդոտ էին դարձել մարդկային առաջընթացի եւ կրթության համար. «Եթե բանականների մեջ չլինեք այս հատկությունը, լուսավորությունը առաջ կերթար անընդհատ եւ հսկայական քայլերով, բայց այսպիսի բան չկա բնության մեջ, ամեն կենտրոնախույս զորություն ունի եւ իր կենտրոնածիքը» (հ. 4, էջ 325):

Գյուղաշխարհի ծնունդ Աղայանը հաստատում է, որ հայրենի Խաչենը «մի հրաշք էր» գյուղացիների աչքում. գյուղն ապրում էր իր հոգսաշատ առօրյայով, ուրախություններով ու տխրություններով, հավատալիքներով, եւ ապագա գրողն էլ խոստովանում է, որ փոքրուց հավատացել է նախապաշարմունքներին:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 3

Զգացմունքների ուժգնությունը, մանավանդ Նազուլի՝ Աղասուն ուղղված երգախառն հատվածներում, թեւեւ զգալի է, բանասիրական բազմաշերտ նյութերի նպատակային կուտակումները՝ ակնհայտ, բայց դրանք սեղմված են չափատողների կաղապարներում եւ ենթակա են հանգի բռնությանը, ուստի լիարժեքորեն չեն բացահայտում կրակված սրտով հեղինակին: Ահա ինչու էւ. Արովյանը, «Աղասու խաղը» պոեմով չբավարարվելով, շարունակում էր հարմարագույն ժամրածելը գտնելու որոնումները, որպեսզի կարողանար ձեւ ու մարմին տալ հայության նվիրական զգացմունքներին, ազգության վեհ ու վսեմ նպատակներին ու գաղափարներին: Տարիների ընթացքում նա կուտակել էր կենսական վիթխարի նյութ, ձեւավորել գաղափարական ու գեղագիտական ազգային նպատակադրումներ, որոնք ուրիշ որեւէ ժանրով

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)

չէին կարող լիարժեքորեն արտահայտվել: Իրականության առավել ընդգրկում ու համակողմանի, լայնքով ու խորքով, պատմական անցյալի ու ներկայի հերոսական դրվագների վերհիշումով, ցավալի կորուստների ողբով ու գալիքի երագանքների համադրմամբ արտացոլելու առավելագույն հնարավորություն տալիս էր վեպի ժանրը: Հասունացման ճանապարհի այս որոնումների արդյունքն է «Վերջ Յայաստանի. ողբ հայրենասիրի» վեպը: Հայրենասերը հեղինակն ինքն է, որն իր կյանքի այդ հանգրվանում ի մի է բերել մեր ժողովրդի պատմական ճակատագրի փիլիսոփայությունը եւ պատկերավոր հզոր ու հրեղեն խոսքով ուրվագծել ու սերունդներին մատնացույց արել մեր հայրենիքի ու ժողովրդի հազարամյակների պատմությունն ու հարատեւության ուղին:

Այս բարդ մտորումների ու զգացմունքների քաոսից է գեղարվեստական ձեւ ու մարմին առել մեծ խտացումը՝ 1841 թ. փետրվարի 9-ից սկսված եւ կարճ ժամանակում բուռն ոգեւորությամբ գրված վեպի առաջին տարբերակը, որը դեռեւս չունի վերը քննարկված հանրահայտ «Հառաջաբանը»:

Նույն՝ 1841 թ. աշնանը էւ. Արովյանը տպագրության էր պատրաստում իր «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն, որի Հառաջաբանում կարեւոր վկայություն ունի վաղ գարնանը գրած վեպի առաջին տարբերակի եւ նրա կենսական հիմքի մասին. «Աղասու մեկ քանի խաղը, որ էստեղ մեջ են բերել կարելի է՝ թե շատ մարդ չիմանա, թե նա ո՞վ էր: Աղասին մեկ ջահել ռաշիդ քանաքոջի հայ էր: Դալբաշի ժամանակին սովորություն կար, որ աղջիկ էին քաշում: Մեկ օր էսպես աղջիկ քաշելիս՝ կտրիճ Աղասին դուս էկավ, մեկ-երկու թուրքի (*խոսքը օսմանցի թուրքերի մասին* չէ: *Արովյանը հստակորեն տարբերակել է պարսիկներին եւ թյուրքալեզու ժողովուրդներին, իսկ թուրքերին ու պարսիկներին նույնացնում էր կրոնով: Երկուսն էլ մահմեդական-մուսուլման էին, ուրեմն՝ երկուսն էլ թուրք էին: Վեպում պատկերված մահմեդական պարսիկներին չպետք է շփոթել օսմանցի թուրքերի հետ*) սպանեց ու փախավ Փամբակ: Խոջի հորըմընըր երեւանու բերդումը չորացրին. Ինքն էլ՝ Ռուսը որ Երեւան առավ, գնաց, որ հորն ազատի, իրան էլ հոր վրա տվին, սպանե-

ցին: Ես խաղերը էն փախած ժամանակն է ասել: Սրա պատմությունը շատ երկար է, որ գրած մոտիս հազիր ունիմ ու նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարհի հալը: Աղջիկն ասես քաշում էին, տղեն ասես տանում էին յա սպանում, յա թուրքացնում: Ո՛չ տունն էր իրան, ո՛չ մալը, ո՛չ ջանը, ո՛չ օղուշաղը: **Գրքի անունն ա «Վերջ Յայաստանի, ողբ հայրենասիրի»:** Էնպես էլ շատ զվարճալի պատմություններ աշխարհաբար գրած՝ մոտիս հազիր ունիմ...»:

«Վերջ Յայաստանի» վեպի առաջին տարբերակը պարզապես ավարտվում էր Երեւանի բերդի գրավման իրադարձության պատկերմամբ: Սակայն իր երկի կատարելությանը ձգտող նախանձախնդիր հեղինակին այդ մակարդակը չէր բավարարում: Նա այնքան էր տարված շտկելի պակասությունները վերացնելու, վեպը ամբողջացնելու եւ իր գեղագիտական նպատակադրումը իրագործելու մտահոգությամբ, որ նույն տարվա աշնանը գրեց երկրորդ տարբերակը՝ լրամշակելով առաջինը: Նրա վրա ավելացան «Հառաջաբանը» եւ «Ձանգի» հավելվածը, չափածո հատվածները եւ քնարական շեղումների զգալի մասը:

Սակայն ստեղծագործական աշխատանքը շարունակվում է նաեւ Երեւանում, որտեղ էլ ստեղծվել է վեպի վերջնական բնագիրը: 1845 թ. Կովկաս եւ Յայաստան այցելած գերմանացի բանաստեղծ Ֆ. Բոդենշտետին գրած նամակից պարզվում է, որ էւ. Արովյանը երրորդ անգամ է վերանաշակել իր վեպը՝ այս անգամ հավելելով Գեղուգ Սմբատյանին հասցեագրված գրաբար չափածո ընծայականը, որով նրան էր նվիրվում վեպը՝ հակառակ Հայկական մարզն ավելի փոքր ինքնավարության լիազորություններով Երեւանի նահանգ անվանումով փոխարինելու եւ ցարական պաշտոնյաների՝ ռուս-պարսկական պատերազմի հերոսի՝ «Կայսերապետի ասպետի» նկատմամբ անբարեհաճ վերաբերմունքի: Գրաբար այս ընծայագիր-ձոներգը, ինչպես նաեւ «Ձանգի» հավելվածի գրաբար հատվածները, նույնպես հավաստում են, թե էւ. Արովյանն ամենեւին էլ մտադիր չէր վերջնականապես իրաժարվելու գրաբարից:

Շարունակությունը՝ էջ 7

ԴԵՒՈՐԴ ԲԱՇԽՆԶԱՆՅԱՆ

Ականավոր հայազգի նկարիչ Գեորգ Բաշինջադյանն ապրել էլ ստեղծագործել է XIX դարի երկրորդ եւ XX դարի առաջին կեսում: Ավելի կոնկրետ՝ նա սկսում է ստեղծագործել XIX դարի 80-ականներին ու ավարտում իր ստեղծագործական ուղին խորհրդային տարիներին: Բաշինջադյանը հայտնի է որպես ռեալիստական բնանկարի հիմնադիր: Ականավոր արվեստագետի ստեղծագործությունների մեջ արտացոլված են երկու ժամանակաշրջանների փոխադարձ կապը եւ տարբերությունները: XIX դարի երկրորդ եւ XX դարի առաջին կեսը յուրահատուկ հետք են թողել հայ ժողովրդի մշակութային կյանքում: Հիշատակված շրջանն անցումային էր, եւ դրանում առկա էին ապագայի նախադրյալները: Այդ շրջանը նշանավորում էր ազգային վերածննդի հեռանկարը, ինչպես նաեւ՝ ազգի հոգեւոր ինքնագիտակցության ամրապնդումը: Բաշինջադյանի ապրած ժամանակը կոչված էր արթնացնելու հայ ժողովրդի ստեղծագործական ներուժը եւ հանգեցնելու խորքային սոցիալական բարեփոխումների: Հենց վերը նշված շրջանում է, որ երեւան է գալիս ստեղծագործողների մի նոր սերունդ: Վերջինս, ժառանգելով նախորդների առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական գաղափարները, ազգային նկարչական մշակույթը բարձրացնում է նոր մակարդակի վրա:

Ինչպես արդեն մեկ անգամ նշվել է, Բաշինջադյանի անվան հետ են կապված բնանկարի կայացումը եւ զարգացումը հայկական արվեստում: Նկարիչը, ստանալով ազդակներ կյանքի բազմալի մոր երեւոյթներից, ստեղծում էր իր ծննդավայրի բնական տեսարանների մի մեծ ու հարուստ համայնապատկեր: Այս եղանակով արվեստագե-

տը մասնակցում էր ոչ միայն իր ազգի մշակութային դիմագծի ձեւավորման գործին, այլեւ ինչ-որ չափով դարաշրջանի հոգեւոր մթնոլորտի ստեղծմանը: Ավետիք Իսահակյանը մի անգամ նկարչի մասին գրել է հետեւյալը. «Մեր սերունդը հիանում էր նրա ստեղծագործություններով, եւ մենք բաց չէինք թողնում նրա ցուցահանդեսներից ոչ մեկը»: Այդ տարիներին գեղանկարչությունը դարձել էր մի երեւոյթ, որը մեծ եւ սուր արձագանք էր առաջացնում: Բաշինջադյանը Կովկասի առաջին արհեստավարժ գեղանկարիչներից էր: Նրա գործունեությունը բարձրացրեց արվեստագետի քաղաքացիական հեղինակությունը:

Բաշինջադյանը ծնվել ու վաղ պատանեկությունն անց էր կացրել Վրաստանում, որպես նկարիչ ձեւավորվել ու կայացել Ռուսաստանում, իսկ հոգու թելերով կապված էր Հայաստան աշխարհի հետ: Նշված երեք երկրներն էլ խոր հետք էին թողել արվեստագետի հոգում, նրա ստեղծագործական երեւակայության մեջ: Այսպիսով՝ նկարիչը դարձավ շատ զգայուն՝ վերը հիշատակված երեք ազգային մշակույթների գաղափարական ու հոգեւոր արժեքների հանդեպ:

Հայրենյաց երկրի բնապատկերները նկարչի համար ոչ միայն ստեղծագործական թեմա էին, այլեւ XIX դարի 70-90-ական թվականների գեղագիտական խնդիր: Մոտավորապես հենց այս տարիներին երիտասարդ գեղանկարչական դպրոցներում հետաքրքրություն առաջացավ հարազատ երկրի բնության պլաստիկ վերարտադրման նկատմամբ, եւ այդ հետաքրքրությունը սերտորեն միահյուսվում էր այն մտքերի հետ, որոնք առնչվում էին ժողովրդի ճակատագրին: Բնանկարի դերն ազգի մշակութային ինքնագիտակցության ձեւա-



վորման գործում դարձավ անփոխարինելի: Բնանկարն ինքնին կարող էր շատ բան ասել՝ առանց խոսքեր շաղկապել: Մինչեւ Բաշինջադյանը հայկական կերպարվեստում չի եղել նույնիսկ մեկ գեղանկարիչ, ով կհաջողեր բնանկարի արվեստը հասցնել անկախ գեղագիտական արժեքի մակարդակի: Ճիշտ է՝ բնանկար գոյություն ուներ, բայց միայն որպես ժանրային նկարների կամ էլ դիմանկարներին ուղեկցող դեկորատիվ մոտիվ: Բաշինջադյանը կարողացավ վերացնել այդ պայմանականության շրջանակները: Նա հաճախ էր ուսումնասիրում իր նախորդների գործերը: Սովորում էր նկարչական պլաստիկա թե՛ հին նկարիչների եւ թե՛ ժամանակակից արվեստագետների ստեղծագործություններից: Բաշինջադյանը հոգեպես մոտ էր այդ նկարիչներին:

Նա բնանկարի արվեստի մեջ հայտնաբերեց մեծաքանակ արտահայտչամիջոցներ եւ կատարելագործեց բնանկարը՝ որպես ժանր: Արվեստագետը տարիներ շարունակ հետևողականորեն մարմնավորել է բնանկարի կոնցեպցիան: Այսպես կոչված՝ «մեծ բնանկարը» հենց Գեորգ Բաշինջադյանի ձեռքբերումն էր: Նրա կտավների տեսադաշտը լայն է ու մասշտաբային: Նկարիչը լանդշաֆտը պատկերում է վերին կետից: Նկարչի ներկայացրած համայնապատկերը կարծես դանդաղորեն ընդարձակվում է: Նրա կտավներում երկրի ու երկնքի տիրույթները կարծես ընդլայնվում են: Ի դեպ՝ պատկերման այս ձևը Բաշինջադյանի հայտնագործությունն էր:

Գեորգ Բաշինջադյանին հաջողվել է համադրել բնապատկերային նկարչության համաշխարհային փորձը հայկական կերպարվեստի ավանդույթների հետ: Հայազգի արվեստագետի ստեղծագործություններում հստակորեն զգացվում է հուզական տոնայնություն, քնարական, դրամատիկական կամ էլ եպիկական հնչեղություն: Նկարչի գործերում նկատելի է նրա հետաքրքրությունը բնության ժամանակային փոփոխությունների հանդեպ: Նա պատկերում է վաղ մոր բացվող գարունը, ուշ՝ տաք ամառը, ինչպես նաեւ երկինքն ամպրոպից առաջ: Արվեստագետը պատկերում է հարավային գիշերը, մռայլ երկինքը եւ լուսաշող ցերեկը:

Էպիկական մոտիվները երեւան են գալիս նկարչի գործունեության ամենավաղ փուլերում: Առաջին անգամ հայ նկարչության մեջ Մասիս սարն ու կապուտակ Սեւանը դարձան կորցված եւ վերագտնված հայրենյաց հողի խորհրդանիշներ: Վեհաշուք Արագած սարը՝ իր ատանճաճեւ ուրվագծով, իսկա Կազբեկը, ռոմանտիկ Դարյալը, Սամահինի եւ Դիլիջանի կիրճերը. այս տեսարանների մասշտաբայնությունը ոչ թե լոկ իրապույտ է արվեստագետին, այլ պատկերման առարկա է դառնում:

Շարունակությունը՝ էջ 6


ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հայր Միքայել վրդ. Զամչյանցի՝ ամենապատիվ Մխիթար Արքաիոր աշակերտներից

Սկզբը՝ էջ 3

Արդ, **ամբարիշտների խորհրդով չի շարժվում**, այսինքն՝ նա, ով ցանկանում է երանելի լինել, պիտի ամեն տեսակի չարությունից զերծ պահի իրեն. նախ՝ ամբարիշտների խորհրդից, երկրորդ՝ մեղավորների գործերից, եւ երրորդ՝ մոլորություններից: Որովհետեւ երեք կերպ են չարիքները գործվում. նախ՝ ներքին խորհուրդներով, երբ մեկը չարիք է խորհում եւ հավանություն է տալիս դրանց՝ հրաժարվելով բարի խորհուրդներից, եւ այդ մարդն ամբարիշտ է կոչվում: Այդ պատճառով էլ ասվում է. **«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում»:** Երկրորդ՝ չարիք են գործում թե՛ գործով եւ թե՛ խոսքով, ինչպիսին են. սպանությունը, զոդությունը, բարկությունը, որկրամոլությունը, վավաճառությունը եւ այլն, մաեւ բամբասելով, նախատելով, հայհոյելով եւ այլն, ու խորհուրդներին հավանություն տալով արդեն դիմում են գործնական քայլերի՝ կամ ձեռքով, կամ աչքով, կամ բերանով եւ կամ մյուս զգայարաններով, եւ սրանք իսկապես մեղավոր են կոչվում, այդ պատճառով էլ նա ասում է. **«...մեղավորների ճապարհին ոտք չի դնում»:**

Երրորդ՝ չարիք են գործում չար ունակություններով, քանզի երբ մեղսալից գործերը կրկնվում են, ապա կրկնվելով առավել եւս զորանում են, որով տպավորություն է թողնում, թե հեշտությամբ է մեղանշում կամ անկարգ սովորությունը է ձեռք բերում, որը չար ունակություն է կոչվում, այսինքն՝ մոլորություն: Եվ նա, ով այսպիսի մոլորություն է ձեռք բերել, հեշտությամբ եւ անխղճորեն չարիք է գործում, եւ եթե նախկինում նա անօրեն գործերը մեծ չարիք էր համարում, ապա այժմ այն փոքր է համարում, եւ եթե նույնիսկ այն մեծ էլ լինի, ապա նա, չցանկանալով այն արժատախիլ անել իր միջից, թեթեւ բան է համարում եւ կատա-



րելագործվելով չարիքի մեջ՝ հաստատվում է դրանում: Եվ անամոթանալով հազեւորի հանդեպ՝ արհամարհում է առաքինության գործերը եւ բարեպաշտությանը ծաղրանքով վերաբերվում, ինչպես որ ասվում է Առակներում. «Ամբարիշտն արհամարհում է չարիքները, երբ հասնում է դրանց խորքերը» (*Մաւկ. ԺԸ 3*):

Այսպիսի մարդը մոլոր է ժանտ է կոչվում, այսինքն՝ ունակ չար ախտեղությունների կամ ունակ այնպիսի մոլորությունների, որոնք դառն են, ապականիչ, փոխադրական եւ անամոթ: Դառն ասացի, որովհետեւ դառնացնում է իր հոգին առաքինությունների քաղցրության եւ ապաշխարության համդեպ եւ դառնացնում ու ժանտով է լցնում թե՛ իրեն եւ թե՛ այլոց: Ապականիչ, որովհետեւ այդպիսին ապա-

կանում է իր գործերը եւ եթե նույնիսկ որեւէ բարի գործ էլ անի, ապա իսկույն ապականում է դա իր մեղքով եւ եթե դարձի էլ գա եւ բարի դառնա, ապա նորից մեծ ջանասիրություն չունենալու պատճառով իր չար սովորություններից զրգովում եւ նորից ընկնում՝ դրանով ապականելով իր կատարած բարի գործը: Փոխադրական, որովհետեւ այդպիսով փոխադրում է իր չարությունը մաեւ ուրիշներին: Ուստի Գեորգ վարդապետը՝ իր Եսայու մեկնության 5-րդ գլխում գրում է. «Ժամտը այն է, որ ոչ միայն իրեն, այլեւ ուրիշներին էլ է տալիս իր ժանտությունը» եւ դա անում է թե՛ գործերով եւ թե՛ խոսքով: Գործերով, որ երբ հաճախում է մեղսալի վայրեր, իր չար օրինակով զայթակղություն

է դառնում պարզամիտներին եւ անմեղներին: Խոսքերով, երբ ջանում է տարբեր հնարամտություններով կամ թունավոր վարդապետությամբ եւ կամ գրքի թյուր եւ մոլոր մեկնությամբ այն հարմարեցնել իր գործերին, որպեսզի չմեղադրեն իրեն: Եվ երբեմն իր մամններին էլ է հորդորում այդպես անել: Եվ այսպիսով իր չար մոլորությունները ժանտախտի պես փոխադրվում են մաեւ ուրիշներին: Այդ պատճառով էլ Յոթանասունից թարգմանության մեջ դա կոչվում է «լիմոս», այսինքն՝ ժանտ, ժանտախտ, որը մահտարածած է նշանակում, որը եւ իրեն է վնասում եւ թե իրենից փոխադրում է ուրիշներին:

Ասացինք մաեւ անամոթ, որովհետեւ այդպիսին չարությամբ եւ անամոթությամբ ծաղրում է առաքինիներին եւ կատակով է

խոսում սրբակենցաղ վարքի մասին: Այստեղ է, որ ասում է. **«Հարագործների հետ համախոհ չի լինում»:** Ինչպես տեսնում ենք, մարգարեն սրանց ակնարկելով է այս բանն ասում:

«Երանելի է այն մարդը [զրաբարում՝ այր], **որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում»:** «Այր» ասելով՝ մարգարեն նկատի ունի ոչ միայն այրերին, այլ՝ ամբողջ մարդկությանը: Իսկ «այր» է ասում նախ այն պատճառով, որ տղամարդն ավելի պատվական է, քան կինը, եւ գլուխն է նրա եւ առավել ընդունակ է բարի վարքի, այդ պատճառով էլ դրանով է կոչում ամբողջ մարդկությունը, տղամարդու միջոցով էլ ցույց է տալիս մաեւ կնոջը: Ուստի, ըստ Սարգիս Շնորհալու. «Երանելի այրն իր հետ երանելի է դարձնում մաեւ կնոջը», ինչպես մաեւ դատապարտելով ամուսնում՝ ասում է. «Իր հետ դատապարտում է մաեւ կնոջը» (*Մեկնություն 3ակոր., Ժառ 2*): Եվ նորից, «այր» ասելով, նույն վարդապետը ցանկանում է երանելի կոչել նրանց, ովքեր «փորձությունների ժամանակ արհամալով՝ Աստծո շնորհիվ հաղթանակ են տանում: Քանզի բոլոր նրանք, ովքեր հեղգության եւ հեշտության պատճառով չեն դիմակայում փորձություններին, այդ չեն կոչվում, այլ կնոջից էլ վատն են» (*Մեկնություն 3ակորի, Ժառ 3*): Իսկ ով արհամում է, այդ է կոչվում եւ մարգարեի կողմից երանության արժանանում: Նույնն է ասում մաեւ Վանական վարդապետն իր Հոգի մեկնության մեջ. «Այդը մա է, ով քաջությամբ է խորհում եւ իր անձը երանությամբ է պահում, ինչպես որ մարգարեն է ասում Սաղմոսի մեջ. «Երանելի է այրը...», եւ ավելացնում է, թե «Հատերն այր կոչվեցին, բայց հավասարվեցին անասուններին, ինչպես որ ասում է Դավիթը 48-րդ Սաղմոսի 13 համարում: Ասում են մաեւ, թե այստեղ մարգարեն արդարի փոխաբեն այր է ասում, որովհետեւ այրին է վայել արդար լինել, քանզի ամբարիշտների խորհրդով չի շարժվում:

«Խորհուրդ» բառը կարելի է երկու կերպ հասկանալ՝ ներգործական եւ կրավորական: Ներգործական, այսինքն՝ խորհրդատվությամբ կամ խրատական, եւ ըստ այդմ էլ՝ կարելի է ասել, թե արդար մարդն ամբարիշտների խորհրդով չի շարժվում:

Շարունակությունը՝ էջ 7

ՂԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

Սկիզբը՝ թիվ 12, 14

Ամռանը կարող ես գիրք կարդալ, որի ժամանակը չես ունեցել ծնունդը: Մտածում եմ՝ այդքան գիրք, որ նվիրում են թերթերը, ամսագրերը, ու վերցնում ես, կարողում ես, այդքան DVD՝ վավերագրական ֆիլմեր կենդանիների, աստղերի մասին, որ նվիրում են, մայիլ ես, հասցրել ես: Հիմա՝ ամռանը, կարող ես դա էլ կարգավորել՝ ասելով, օրինակ. «Այս գիրքը, որ կիսատ եմ թողել, ավարտիմ հասցնեմ, վերցնեմ մի մոր գիրք՝ կարդալու» եւ այլն: Կարդանք ամռանը: Գրքերը հանգստացնում են մեզ, լցնում ժամանակը, հեռու պահում մեղքերից, վատ մտքերից, ավելորդ արարքներից: Սա ասում եմ, քանի որ ոմանք ծանծրանում են ամռանը, ոչինչ չունեն անելու կամ էլ տրվում են հեռուստացույցին, եւ ինչ հիմարություն, ինչ մեղք ցուցադրվում է, կոլ եմ տալիս: Սա ամառ եղավ: Ամառ է, բայց իմ հոգում՝ ծնեմ: Ամռանն ազատվիր թույնից, հովացրո՛ւ հոգիդ: Եվ հովը ճշմարտության գիտությունն է՝ Աստծու ճշմարտության, այլեւ՝ այս աշխարհի ճշմարտության: Գնա՛լիս այս աշխարհի գեղեցիկը, եւ դրա լավագույն միջոցը, կարծում եմ, ընթերցանությունն է: Կարդա՛ հայրաբանական գրքեր, Ավետարանին, Աստվածաշնչին վերաբերող գրքեր, գրքեր՝ գիտական, պատմական, փիլիսոփայական, արվեստի, առողջության մասին, պատմվածքներ, հեքիաթներ եւ այլն: Յուրաքանչյուր ոք թող ընտրի իր սրտին մոտ մի գիրք: Առաջարկում եմ նաեւ վերցնել մեր եկեղեցու ժամագիրքը եւ տարբեր ժամերի կարդալ: Վերցրե՛ք նաեւ «Յայսմաւորք»-ը եւ ամեն օր կարդացե՛ք այն սրբի վարքը, որի տոնը նշվում է: Կարող է մեկն ինձ ասել. «Բայց, հայր, ես դա ամեն օր եմ անում»: Գիտեմ, որ դու ամեն օր ես անում, բայց կան մարդիկ, որ ծնունդը ժամանակ չունեն: Մեկն ինձ պատմեց, որ ողջ օրը վազում է խելագարի պես, առավոտյան աշխատանքի գնալիս խանութից կոկորի (հունական օղակաձեւ հաց՝ վրան քնջուր) կամ սեմոլիչ է վերցնում, որի կեսն ուտում է վերելակի մեջ, մյուս կեսը՝ ընդմիջմամբ: Ամռանը, սակայն, այդպես չէ, կարող եմք հետեւել (գեղեցիկ է, չէ՛, հնչում. հետեւել) եկեղեցու ռիթմին, եկեղեցու կյանքին: Գեղեցիկ է արթնանալ առավոտյան ու Արեւագալի ժամերգություն անել: Ապրենք մի քիչ, այսպես ասած, վանական կյանքով: Կարող եմք առավոտյան ժամերգությունը լսել նաեւ ռադիոյով: Վերցրո՛ւ ժամագիրքը, լսիր ժամերգությունը եւ հետո էլի կարող ես քնել ու հանգստանալ: Գիտեմ, թե ինչ գեղեցիկ է այս կյանքը: Ապրիր այսպես, եւ ժամանակը

ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

կիսի ջրի պես, որովհետեւ քո մեջ կբնակվի կենդանի ջուրը, որը Տերն է: Հենց ինքն է ասում. «Ով հավատում է Ինձ, իր մեջ անընդհատ հոսող զով ջուր կունենա»: Իսկ մեր ուզածը ջուր չէ՛ ամռանը: Ահա, հոգու ջուրը Աստծու բարի ու անմահ խոսքերն են, եկեղեցուն երգվող երգերը: Եթե կապ չունեք եկեղեցու հետ, ստեղծեք այդ կապը: Ամեն ինչ իր սկիզբն ունի:

Ամռանը հանգստանալու համար ծով գնացե՛ք ձեր երեխաների, հարազատների հետ: Մի հանգիստ ափ ընտրե՛ք ու մնացե՛ք որոշ ժամանակ: Անընդհատ քաղաքից ծով գնալ-գալը երբեմն տանջանք է դառնում, եւ ափսոսում ես, որ գնացել ես: Բացի այդ, զգո՛ւ լինենք, որովհետեւ ոմանք ծով են գնում ոչ միայն ծովի համար: Շատերն ուզում են պարզապես շրջել, իրենց ցույց տալ: Բոլոր դիտարները, որ պահում են ծնունդը, ամռանը ներկայանալի լինելու համար է: Դա լավ չէ, որովհետեւ հաճախ, օրինակ, ամուսինների մեջ խամո է առաջանում: Միմյուրեւ պետք է պահպանենք իրար, հարգենք մյուսի բարոյականությունը, արժանապատվությունը, համեստությունը, սերը, վստահությունը: Հիմա՝ ամռանը, օգնիր կնոջը՝ ավելի վստահ լինելու, որ սիրում ես իրեն, եւ դու, սիրելի՛ քույր, օգնիր ամուսնուդ՝ ավելի ուժգին զգալու, որ սիրում ես իրեն: Զգո՛ւ լինենք, որովհետեւ ամռանը բազմաթիվ խնդիրներ են առաջանում: Պատճառ չդառնանք մյուսի խանդի համար, նրա մեջ վատ մտքեր չառաջացնենք: Հիշենք, որ պատասխանատվություն ենք կրում մեր արածի համար: Հուսով եմ՝ չեք մեղվում, որ այսպես պարզ եմ խոսում: Զվտանգենք մեր ընտանիքի ապահովությունը՝ տեղիք տալով, որ ամուսինը մտածի. «Հիմա ինձ սիրում է, երբ որ ուզում է ցուցադրել իրեն մարդկանց մեջ, ուզում է՝ մարդիկ իրեն նայեն»: Այսպիսի դեպքեր հաճախ են պատահում, դժբախտաբար: Բայց բարեբախտաբար, լսում եմ դրանց մասին, որովհետեւ լսում եմ խոստովանության ժամանակ: Ամռանը խզվում են բազմաթիվ հարաբերություններ: Բայց ամառը քո գեղեցկանալու մոլուցքի, գեղեցկությունից ցույց տալու համար չէ, որով նաեւ ուրիշների մեջ ես մեղքեր, գայթակղություն առաջացնում: Ամառը զով հոգի ու մարմին ունենալու հա-



մար է, որը լինում է համեստությամբ, սիրով, խոնարհությամբ, զգոնությամբ:

Ուրեմն՝ հանգստանանք ամռանը: Գնացե՛ք որեւէ վանք՝ երեկոյան ժամերգության: Վերցրե՛ք ձեր երեխաներին ու գնացե՛ք որեւէ եկեղեցի, վանք՝ ժամերգությանը մասնակցելու, եւ ապա զբոսնե՛ք միասին, մի բան կերեք ծովի մոտ մի տեղ, եթե գտնեք ու եթե կարող եք: Իսկ եթե չեք կարող, ոչինչ, գնացե՛ք ձեր տուն, ինքներդ մի համեղ, թեթեւ, ամառային աղցան պատրաստե՛ք ու ընթրե՛ք միասին: Կարեւորը սրտի ջերմությունն է:

Ոմանք կարող են Սուրբ Աթոս լեռ գնալ: Բնականաբար, այնտեղ չենք գնում ցրվելու ու հանգստանալու միայն. Սուրբ Աթոս գնում ենք նաեւ պայքարելու համար: Գնում ենք այնտեղ ոչ թե թեթեւանալու եւ մարդկանց նեղություն պատճառելու, այլ օգնելու նրանց՝ տեսնելու, որ մենք էլ պայքարում ենք, եւ իրար ձեռք բռնած՝ քայլելու դեպի Աստված ճանապարհով: Գնում ենք այս սուրբ վայրերը որպես ուխտագնացություն:

Հանգստանանք... բայց կան որոշ բաներ, որոնցից պետք չէ հանգստանալ: Չհանգստանանք սիրուց. սերը չի հանգստանում մոլորիկ ամռանը: Ամռանը լի՛ եղիր սիրով: Մի՛ հանգստացիր աղոթքից: Ամռանն ամեն կիրակի եկեղեցի՛ գնա: «Բայց քույր տանում է»: Լավ, հետո կքնես, ինչքան ուզում ես, քնիր նաեւ կեսօրից հետո: Եկեղեցի պետք է գնալ: «Ամռանը»: Բայց ծնունդն ասում է՝իր՝ աշխատում ես ու չես հասցնում, հիմա՛ ինչու չես գնում: «Դե, հիմա՝ այս շոգին, թուլանում եմ»: Սպասիր, մյուս բաներից չեմ թուլանում, ինչպե՛ս ես այլ բաներ անում: Ե՛րբ չուն ասա. պարզապես շատ չես սիրում Հիսուսին: Դու էլ ինձ նման ես: Ես գնում եմ, որովհետեւ քա-

հանա եմ: Շատ հաճախ գնում եմ նաեւ, որովհետեւ ուզում եմ եւ սիրում եմ: Բայց հասկանում եմ, որ դժվար է արթնանալ առավոտ շուտ ու գնալ եկեղեցի, եթե շատ չես սիրում, մույմիսկ եթե քահանա ես: Սիրենք Տիրոջն ավելի շատ ամռանը, սիրենք ամռանը «քաղցր գարունը», որը Տերն է: Եվ արթնանանք առավոտյան ու գնանք եկեղեցի: Չեմ կարծում, որ այս խոսքերը լսողներից որեւէ մեկը չգնա եկեղեցի: Եթե այդպիսի բան լինի, ուրեմն՝ ձախողել եմ: Մեծ անհաջողություն եմ կրել, եթե չես գնում եկեղեցի: Խնդրում եմ քեզ, գնա՛ եկեղեցի ամեն կիրակի, գնա՛ հիմա՝

ամռանը, ինչքան ժամանակով որ կարող ես: Եվ եթե շոգ է, ու քրտնում ես, քրտնիր եկեղեցուն: Հրեշտակները կգան՝ մխիթարելու քեզ, կվերցնեն քրտինքդ ու կտանեն Աստծուն: Հիսուս Քրիստոսի համար արված ոչ մի ջանք չի կորչում:

Ամռանը մի՛ հանգստացե՛ք խոնարհությունից: Մի կրո՛ւմ դրեք եասիրությունը, խոնարհ եղե՛ք: Մի՛ հանգստացե՛ք զոհաբերությունից: Ուր էլ գնաս հանգստանալու, կարիք կլինի զոհաբերության. զոհաբերություն մայրիկիդ համար, որ ծերացել է արդեն, դարձել տատիկ եւ կարիքներ ունի, զոհաբերություն մի որեւէ հարեւանի համար, որ քեզ կանչում է օգնության՝ դաշտում աշխատելու: Կարող է՝ գյուղ ես գնացել, ու որոշ ընկերներ ավտոմեքենա չունեն, եւ խնդրում են քեզ իրենց կողքի խանութը տանել առետրի, ու սկսում ես նյարդայնանալ՝ ասելով. «Բա սա արձակուրդ եղավ, ոչ մի տեղ չես կարող հանգստանալ»: Չէ, այդպես պետք չէ: Հանգստանալիս էլ մի՛ հանգստացիր զոհաբերությունից, սիրուց: Բացի այդ, սա ամեն օր չի լինի: Չլինի այդպես, ինչպես ասում էր հայր Պաիսիոսը. «Ոմանք երբեմն հոգնում են հանգստանալուց»: Բայց՝ մեղավոր կերպով հանգստանալուց, այսինքն՝ եասիրաբար. հիմա, որ ամառ է, ուզում եմ՝ բոլորդ ստրուկներս լինեք, թող ամեն ինչ պատվի իմ «ես»-ի շուրջը, կանցե՛ք այն, ինչ որ ես եմ ուզում, կարեւորը՝ ես լավ անցկացնեմ: Չէ, այդպես չես հանգստանա, կհոգնի հոգիդ: Մեր հոգին չգիտի՝ ինչ է ամառը, եւ դեռ փնտրում է գարունը: Ամառը հետո կգա, հանգիստը աշխատանքից, պայքարից, զոհաբերությունից կգա Աստծու արքայության մեջ: Այս կյանքում դադար չկա դրանց, մույմիսկ՝ ամռանը:

Շարունակությունը՝ էջ 8

ԴԵՐՈՐԻ ԲԱՇԽԱԶՄԱՆՅԱՆ



Սկիզբը՝ էջ 5

Բաշինջաղյանի գործերի սյուժեները երբեւէ մասնատված կամ պատահական չեն: Նշենք, որ տաղանդավոր նկարչի ուշադրությունը գրավում է նաեւ այն, ինչը բնության մեջ փոփոխական է ու հոսուն: Բաշինջաղյանի համար պատկերման

առարկա կարող են դառնալ մթնոլորտը, երկրից բարձրացող գոլորշիները, թխպոտ ու անհանգիստ երկնքի եւ ջրի մակերեսության ռիթմերի, անշարժության ու քամու խաղի, լույսի եւ ստվերի հարաբերակցությունները: Այս ամենը նկարիչը տեսնում է խոշոր պլանով եւ ռոմանտիկական հա-

յացքով: Արվեստագետը հասում տարիներին հետզհետե հաստատում է էպիկական բնանկարի տեղը հայկական գեղանկարչության մեջ: Նա ստեղծում է բնանկարի ծավալուն ու ամբողջական պատկեր: Առանձին դեպքերում Բաշինջաղյանի ստեղծագործությունները կարելի է բնորոշել որպես Հայաստան աշխարհի «համակցված» բնապատկեր: Հավանաբար Բաշինջաղյանը մեր օրերում հետաքրքիր է ոչ միայն նկարների ոճական յուրահատկությունների, այլեւ բնության հանդեպ ունեցած ընդհանուր խորքային կոնցեպցիայի շնորհիվ: Հետաքրքիր են նրա փիլիսոփայությունը եւ այն գեղարվեստական հայացքը, որով նա դիտում է մեզ շրջապատող բնությունը: Այս եղանակով մենք հնարավորություն ենք ստանում տեսնելու, որ հայկական կերպարվեստի ավանդույթները երբեք չեն ընդհատվում: Հայկական կերպարվեստի մեջ մի կողմից առկա է անհատական ոճերի բազմազանություն, իսկ մյուս կողմից՝ ամբողջական ոճական համակարգեր: Բաշինջաղյանի կրտսեր գործընկերները, ովքեր ստեղծագործում էին իմպրեսիոնիստական կամ դեկորատիվ ոճով, եւ խորհրդահայ բնանկարիչները, որոնց կտավներն իրապես շատ էին տարբերվում նրա կտավներից, հիացմունքով էին խոսում Բաշինջաղյանի գործերի պլաստիկայի, դրանց գունային տոների ու վրձնահարվածների «թափանցիկության» մասին: Նման նկարչությունն օժտված էր խորքային հատկանիշներով: Արդի ժամա-

նակների նկարիչները կարծում են, որ մեծ վարպետը դրսևորել է աշխարհընկալման ամբողջականություն:

Ժամանակակից տեսաբանները Գեորգ Բաշինջաղյանի անվան հետ են կապում հայ գեղանկարչության մոր փուլի ստեղծումը, ինչպես նաեւ մասնագիտական ավանդույթների կայունությունը, որն այսօր էլ գրավում է հայ արվեստի ցուցահանդեսների այցելուներին: Ամեն մի ժամանակաշրջան դնում է իր շեշտադրումներն արվեստի բնագավառում: Գեորգ Բաշինջաղյանի արվեստը նշանակալից էր ոչ միայն իր ապրած ժամանակաշրջանի, այլեւ ապագայի համար: Այս իրողությունը քաջ գիտակցել էր մեծ վարպետ Մարտիրոս Սարյանը: 1957 թ. վերջինս գրել է. «Գեորգ Բաշինջաղյանը Կովկասի հրաշալի պոետն է, Արարատի, Կազբեկի ու Սեւանի երգիչը: Նա զգում էր սարերի, կիրճերի ու հարթավայրերի մեծությունը: Նա մի շարք ոգեշունչ կտավների հեղինակ է»:

Բաշինջաղյանը մեծ հայրենասեր էր ու հումանիստ: Նա անչափ սիրում էր իր հայրենյաց երկրի բնությունը եւ այդ սերն իրեն ժառանգություն փոխանցել է իր ազգին: Ինչպես իր կյանքի օրոք, այնպես էլ ներկայումս նկարչի գործերը շարունակում են ամրապնդել «բարձր պլաստիկայի» արվեստի դիրքերը: Այդ արվեստը կոչված էր ազնվացնել մարդ արարածին:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)



Սկիզբը՝ էջ 4

Ընդհակառակն, գրաբարին վերադառնալու միտումով էր նա աշխարհաբարը կարեւորում՝ որպէս ժողովրդին գրագիտացնելու եւ գրաբարի գանձը վերագտնելու միջոցներից մեկը:

Վեպի ժանրը եւ Արովյանի գրական ուղիությունը: Դորպատյան տարիների ուսումնառությունը, օտար լեզուների յուրացումը Խ. Արովյանին հնարավորություն տվեցին

բնագրով կամ թարգմանաբար ընթերցելու համաշխարհային գրականությունը: Մանավանդ 19-րդ դ. 1-ին տասնամյակներին բարձր մակարդակի հասած եվրոպական ռոմանտիկական ու ռեալիստական վեպերը, որ նա ընթերցում էր գերմաներենով ու ֆրանսերենով, առավել սրեցին հայ գրականության մեջ այդ ժանրի բացակայության զգացողությունն ու արմատավորման անհրաժեշտությունը եւ Խ. Արովյանին նախապատրաստեցին գրելու հայ առաջին ինքնուրույն վեպը: Սակայն Խ. Արովյանը չէր կարող բավարարվել միայն եվրոպական վեպի կամ արեւելյան հեքիաթի ժանրածեւերով, նրանց դիպաշարային կառուցով, կերպարաստեղծման եղանակներով, գեղագիտական ու փիլիսոփայական նպատակադրումներով: Հայ ընթերցողի համար ազգային առաջին վեպը նա ստեղծելու էր հատուկ ծրագրով, յուրահատուկ կառուցով ու սկզբունքային հարցադրումներով, գեղագիտական ու ճանաչողական հզոր լիցքերով եւ չափտի հետապնդել միայն գեղարվեստական նպատակներ, այլ, ինչպէս հետագայում Ավ. Խաչատրյանն է բնութագրել, պիտի դառնար «մեր ամեն ինչի սկիզբը»:

Լայն էր Խ. Արովյանի տեսադաշտը, խոր էր նրա կենսաճանաչողությունը, դրանց շնորհիվ էլ նրա վեպը ձեռք է բերել անպարփակ ընդգրկում ու հզոր շնչառություն: Միայն այդպիսի վեպով կարելի էր ներկայացնել «մեր աշխարհի էն ժամանակվա հալը»: Համաշխարհային վիպագրության մեջ այն իր տեսակով եզակի երեսույթ էր եւ խոր

ազդեցություն է թողել մեր հետագա ողջ գեղարվեստական մտածողության եւ մշակույթի տարբեր ճյուղերի զարգացման ընթացքի վրա: Անգամ բեմադրել են ժամանակին, եւ Պերճ Պռոշյանն էլ խաղացել է Աղասու դերը, իսկ Վրթ. Փափազյանը գրեթե մնամակել է՝ գրելով «Սոխակի տղան» վեպը, որտեղ գլխավոր հերոսը քանաքեռցի է՝ անուռն Աղասի, որ իր նախորդի նման անձնագրիաբար կատարում է անօրինակ սխրանքներ:

Հեղինակն իր ստեղծագործությունն անվանել պատմական վեպ: Սակայն դասական պատմավեպից այն տարբերվում է մի շարք յուրահատկություններով: Այն ոչ թե պատմական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա հայոց պատմության մոտիկ կամ հեռավոր անցյալի դրվագներից մեկի գեղարվեստականացումն է, ինչպէս Ծերենցի, Բաֆֆու, Մուրացանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Լ. Շանթի, Հ. Շիրազի, Ս. Խանզադյանի, Հովհ. Դուկասյանի, Ս. Այվազյանի, Պ. Ջեթունցյանի, Լ. Խեչոյանի եւ ուրիշ հեղինակների պատմագեղարվեստական երկերն են, այլ հիմնականում հեղինակին ժամանակակից իրադարձությունների գեղարվեստական պատկերում՝ պատմության շաղախով, իրական անձնավորությունների կերպավորումով՝ առանց պատմական սկզբնաղբյուրների գործածության:

Վիպական շարադրանքում՝ մանավանդ հեղինակային շեղումներում, պատմական նշանավոր դեպքերի եւ դեմքերի վերհիշումներ, հայոց ողջ պատմության նպատակային թռուցիկ ուրվագծումներ, անշուշտ, կան (որպեսզի ընթերցողը այդ վեպով նաեւ ճանաչի հայոց պատմությունը, եւ օտարներն էլ կարողանան մեզ ճանաչեն), սակայն պատկերվող վիպական բուն գործողությունները կատար-

վում են 1820-ական թթ., եւ ականատես հեղինակի կամ այլ ժամանակակիցների հուշերն են այդ գործողությունների պատմական ատաղձը: Եվ այնքան ճշգրիտ են վեպում գեղարվեստականացված դրանք, որ, ինչպէս Հովհ. Թումանյանն է իր «Երեւանի պատերազմը եւ Արովյանի «Վերջ Հայաստանին» բավական ծավալուն ուսումնասիրության մեջ ցույց տվել, ճշգրտորեն համընկնում են ռուսական ռազմական աղբյուրների համապատասխան վավերագրերին: Ավելի պարզ՝ դեպքերին ժամանակակից Արովյանը 17-18 տարեկան էր՝ Ներսիսյան դպրոցն ավարտած չափահաս պատանի, իսկ վեպը գրվել է իրադարձություններից 15-16 տարի հետո, երբ հեղինակը 32 տարեկան էր: Ուրեմն՝ կարող ենք, հեղինակին չհակադրվելով, ասել, որ «Վերջ Հայաստանին» որքան պատմական, նույնքան էլ արդիական վեպ է, նրա էջերում պատմականն ու արդիականը մի անբաժանելի միասնություն են կազմում, եւ դա նրա կարեւոր յուրահատկություններից մեկն է:

Թերեւս անցյալը ներակայացնելու այս նպատակադրումն է հեղինակին մղել իր հույժ արդիական ստեղծագործությունը պատմական վեպ անվանելու: Սրանով Արովյանն իրագործում էր իր գաղափարագեղագիտական նպատակադրումներից մեկը՝ ժողովրդին մատչելի լեզվով, ուրիշ գիրք չլի՝ նելու պայմաններում, «Վերջ Հայաստանի» գեղարվեստական երկին հաղորդել հայ եւ համաշխարհային պատմության ուսուցողական դասագրքի արժեք:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հայր Միքայել վրդ. Զամչյանցի՝ ամենապատիվ Մխիթար Աբբաիոր աշակերտներից

Սկիզբը՝ էջ 5

Կրավորական, այսինքն՝ խորհրդածությամբ, մտքում խորհելով, եւ ըստ այդմ էլ ցանկանում է ասել, թե արդար մարդը չի խորհում այնպես, ինչպես խորհում են ամբարիշտները:

Չի ասում, թե չի խորհում կամ չխորհեց, այլ՝ չգնաց՝ ցույց տալու համար, թե ամբարիշտների այդ խորհուրդները, որոնց մասին այստեղ խոսում է, ոչ թե տեսական են, այլ գործնական, որ ամբարիշտները չարիք են գործում ոչ թե նայելով, այլ գործերով: Իսկ արդարը չարիք չի խորհում գործնականորեն, եւ եթե չարիք էլ գործի, ականա է ստացվում, ըստ որի՝ նրա խորհուրդներն ակամայից են չար խորհել տալիս իրեն, որովհետեւ «մարդու միտքը մանկուց չարի ծառայության մեջ է» (*Ծննդ. Ը 21, տես նաեւ Դովմ. Է 15-24*):

Մեղավորների ճանապարհին ոտք չի դնում, այսինքն՝ ոչ միայն չի գնում ամբարիշտների խորհրդին, այլեւ մեղավորների ճանապարհին էլ ոտք չի դնում: Այստեղ «ճանապարհ» ասելով՝ նկատի ունի գործերը, քանզի Սուրբ Գրքում էլ մարդկանց թե՛ բարի եւ թե՛ չար գործերը ճանապարհի է նմանեցվում. «Արդարների ճանապարհները նման են ծագող լույսի... ամբարիշտների ճանապարհները նման են խավարի, եւ նրանք չգիտեն, թե ինչպես պիտի սայթաքեն» (*Առակ Դ 18-19*):


Իսկ մարդկանց գործերը ճանապարհին նմանեցնելու պատճառն այս է. մարդու այստեղի կյանքը համարվում է իբրեւ ընթացք կամ ճանապարհի դեպի հանդերձյալ կյանք կամ հավիտենականություն: Եվ մարդկային գործերն այնպիսին են, որ վտանգների, ծախսողությունների, մեղքի պատճառով կարող են սահել ու ընկնել, դրա համար էլ ճանապարհ է կոչվում: Եվ նորից, ինչպես որ ճանապարհ գնալիս ցանկանում ես տեղ հասնել, այդպես էլ մարդն իր գործերով ցանկանում է հասնել այնտեղ, որտեղ որ նպատակադրվել էր, այդ պատճառով էլ նրա գործերը նմանվում են ճանապարհի: Բննելու արժան է այն, որ մարգարեն չա-

սաց, թե չգործեց, կամ չգնաց, այլ՝ **ոտք չի դնում**, այսինքն՝ արդարը մեղավորների ճանապարհին՝ մեղքի մեջ չի կարող մնալ, թեւ երբեմն նա էլ է սխալվում եւ գնում մույն ճանապարհով, այսինքն՝ մեղանչում, ինչպես որ գրված է. «Բայց եթե արդարը յոթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի, մինչդեռ ամբարիշտները պիտի տկարանան չարիքների մեջ» (*Առակ. ԻԴ 16*): Եվ նորից, ով գործով է մեղանչում՝ չար խորհուրդները գործի դնելով, մնում է դրա մեջ, իսկ արդարը ետ է կանգնում եւ զգուշանում, այդ պատճառով էլ մեղավորների գործերի մեջ չի մնում, այսինքն՝ նրանց գործերը չի գործում:

Եվ չարագործների հետ համախոհ չի լինում: Այսինքն՝ չի հաստատվում մեղավորների գործերում կամ նրանց պես չէ, ովքեր հաճախ գտնվելով մեղքի մեջ՝ չար ունակություններ են ստանում: Չի ասում, թե նրանց չար գործերից չի անում կամ նրանց կյանքով չի ապրում, այլ՝ համախոհ չի լինում նրանց հետ: Նույնպես նրանք, ովքեր չար սովորություններ ունեն, հաստատված են դրանցում եւ դա սովորական բան են համարում, ինչի պատճառով էլ, իրենց թողած, դատում եւ ծաղրում են առաքինի կյանք վարողներին:

«Ժամ ասելով՝ այստեղ կարելի է նկատի ունենալ ժամտաբարո մարդուն, որոնք եթե ժամտությամբ չեն խոսում ուրիշների հետ, չեն հանգստանում, եւ ժամտախոսությունն իրենց անձերի համար հանգստություն են համարում: Եվ ըստ այդմ էլ՝ երանելի է համարվում նա, ով համախոհ չի լինում ո՛չ խորհրդով, ո՛չ խոսքով եւ ո՛չ էլ գործով: Խորհրդով, ինչպես ասվում է. **ամբարիշտների խորհրդով չի շարժվում**, խոսքով, ինչպես ասվում է. **չարագործների հետ համախոհ չի լինում**, գործով, ինչպես ասվում է. **մեղավորների ճանապարհին ոտք չի դնում**:

«Ժամտ» բառը մեկնաբանվում է նաեւ որպես աղանդավոր եւ հերետիկոս, ուստի ըստ դրա ասել, թե **չարագործների հետ համախոհ չի լինում** [գրաբարում՝ աթոռ



չի նստում], ցույց է տալիս, թե արդարը չի ուսանում կամ որեւէ մեկին չի ուսուցանում մոլոր վարդապետություն եւ չի տարածում մոլորությունը, ինչպես որ սովոր են անել հերետիկոսները:

Չարագործների հետ աթոռ չի նստում. հասարակության առջեւ քարոզողներն աթոռի վրա են նստում, եւ այնտեղից են տարածում իրենց վարդապետությունը, որ լսելի լինի բոլորին: Դա նաեւ այլաբանորեն է ասում, ինչպես ասաց Քրիստոսը. «Մովսէսի աթոռի վրա նստեցին օրենսգետներն ու փարիսեցիները. ամեն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արե՛ք եւ պահեցե՛ք, բայց մի արեք ըստ նրանց գործերի, քանի որ ասում են, բայց չեն անում» (*Մատթ. ԻԳ 2-3*):

Լամբրոնացին ժամն է համարում սատանային, ինչպես նաեւ «ամբարիշտ» եւ «մեղավոր» բառերը վերագրում է սատանային եւ նրա դեւերին: Ասում է, թե սրանց խորհուրդներին արդարը չի գնա եւ նրանց ստության ճանապարհների վրա չի քայլի եւ սրանց աթոռի վրա չի նստի, այսինքն՝ իշխանության: Իսկ ուրիշները, «ամբարիշտ» ասելով, հասկանում են հեթանոսներին, «մեղավոր»՝ հրեաներին, եւ «ժամտ», ինչպես վերում ասեցինք, հերետիկոսներին: Ոճանք էլ, «ամբարիշտ» ասելով, հասկանում են մարմնասերներին, «մեղավոր»՝ հպարտներին, եւ «ժամտ»՝ բարկացողներին: Մի մասն էլ նույնպես, «ամբարիշտ» ասելով, հասկանում են նրանց, ովքեր հաստատված չեն բարու մեջ, «մեղավորներ»՝ միայն չարերին, իսկ «ժամտ»՝ չարիքի մեջ հաստատվածներին եւ բարին արհամարհողներին: Վարդանը, «ամբարիշտ» ասելով, հասկանում է կռապաշտներին, «մեղավոր»՝ նրանց, ովքեր ունեն հավատքը

եւ օրենքը, բայց մեղանչում են, իսկ ժամտ է կոչում նրանց, ովքեր նորանոր չարիքներ են հորինում: Սարգիս Շնորհալիւն էլ, սրանց միանալով, իր մեկնությունն Ա Պետրոսի 4 համարի 18 կետում ասում է. «Ի՞նձ թվում է, թե մեղավոր է կոչում նրանց, ովքեր հավատքից ոչինչ չշահեցին, իսկ ամբարիշտ կոչում է նրանց, ովքեր անասոված կուռքերի մոլորությամբ էին լցված»: Սրանք բոլորն էլ հարմար են բնաբանին, միայն թե չեն ամփոփում խոսքը:

Արդ՝ մարգարեն, սրանց առաջինը դնելով, միայն նրան է համարում երանելի, որ հեռու է եւ ազատ այդպիսիներից, այսինքն՝ մեղանչելուց թե՛ խորհրդով, թե՛ գործով եւ թե՛ ժամտությամբ: Իսկ եթե մեկը միայն սրանցից մեկից ազատ լինի, նա երանելի չէ, նույնպես եթե երկուսից ազատ լինի եւ մեկի մեջ միայն հարատեւի, նորից երանելի չէ, քանզի այդ մեկով էլ կարող է հեռանալ Աստծուց, ըստ այսմ՝ թե. «Անիրավ խորհուրդները բաժանում են մարդուն Աստծուց» (*Իմաս. Սող. Ա 3*): Այսինքն՝ եթե տախտակը հղկված չլինի բոլոր կողմերից, այլ որեւէ անհարթ տեղ ունենա, չի կարող միանալ մյուս հարթ տախտակների հետ, այդպես էլ մարդը, եթե ամեն կողմից չհարթվի մեղքերից, չի կարող միանալ Աստծուն, Ով անսահման ուղղություն է, այլ անջատված է մնում Նրանից: Եվ արդ, միայն չարից հեռանալը բավական չէ երանելի կոչվելու համար, այլ պետք է նաեւ բարին գործել, այսինքն՝ Աստծու կամքը կատարել՝ ըստ Իր օրենքների:

Հատոր Բ, 1815, Վեներտիկ, էջ 4-12

Թարգմանությունը՝ Գայանե ԹԵՐՉՅԱՆԻ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 4

Բայց եւ այնպէս, տարիների բովում ծնվում է ուրույն փիլիսոփայությունը երջանիկ ազգի մասին. «Երջանիկ կարող է լինել այն ազգը միայն, որ գիտե, թե ոչ մի չարիք աստվածանից նրան չի հասնում եւ երբեք էլ չի հասնիլ ոչ մի դէպքում: Իսկ եթե ներկայացնե իրան, թե աստված իր գլխին բարկացել է եւ պետք է հրով ու սրով ջնջել տա աշխարհի երեսից մի քուրդ կամ թուրքի ձեռով, այդ հավատը նրան իսկապէս էլ կընջի» (h. 4, էջ 338): Սանկոյան տարիների հուշ-մտորումներն ամբողջական են դարձնում գլխավոր հերոսի դիմաստվերը: Գրողը ներկայացնում է հայ գյուղի պատկերը իրական գույներով. «Գյուղի մեծերի մեջ գրագետներ չկային, իսկ մանուկների մեջ միակ գրագետը եւ էի: Քահանա անգամ չունեինք, կարգ պատահած ժամանակ ուրիշ գյուղերից էինք քահանա բերում, որոնք մաշտոցն անգամ կարդալ չէին սովորել, այնքան բթամիտ էին: Այսպիսի մթության եւ խավարի մեջ լուսատիկն անգամ ճրագ կթվա: Չարմանալի չէ ուրեմն, որ ես մի հրաշք թվայի գյուղացոց աչքումը» (h. 4, էջ 340):

Հուշագրության մեջ հեղինակն ազնվորեն խոստովանում է, որ դեռ փոքր տարիքից իր զարմանալի ունակություններով առանձնացել է շրջապատից ու ձգտել «երեւելի մարդ» դառնալ. դա որոշակի ազդեցություն է թողել իր անհատականության ձեւավորման վրա՝ հաճախ միախառնվելով ինքնասիրահարվածության հատկանիշներին: Աղայանն անթաքույց նշում է, որ գոռոզությունն ու ինքնասիրահարվածությունն իր ժառանգական հատկություններն էին, որ բնորոշ էին թե՛ հայրական, թե՛ մայրական կողմին: Այդ ինքնասիրահարվածության վառ դրսևորումն է ինքնակենսագրական վեպը. «Արություն եւ Սանվել» վեպը իմ ինքնասիրության արդյունքն է: Ինձ հարկավոր էր մի հերոս. ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա: Քան թե պիտի երեսակայեի եւ խելքիս զոռ տայի, ավելի լավ համարեցի՝ ստուգապատում լինելու համար, բուն իրողությունը, իմ իսկապէս տեսածն ու լսածը վիպական ձեւի տակ ձգել» (h. 4, էջ 341):



Ինքնուրույնության եւ կատարելության ձգտող պատանի Ղազարոսը 1853-ին ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի վերջին դասարան: Ժամանակի արեւելահայ կրթության եւ մշակութային նշանավոր կենտրոն այս քաղաքում էր ապրում նրա քույրը՝ Օսանը: Սկզբում աշխատում է Ենֆիաճյանի տպարանում՝ որպէս գրաշար, եւ հնարավորություն է ստանում փոքր-ինչ մեղմելու նյութական անձկությունն ու զբաղվելու կրթությամբ: Ենֆիաճյանը եւ նրա տպարանը հեղինակի կյանքում դառնում են լուսավոր կետեր՝ առջեւը բացելով մոր ուղիներ ու զարգացման հեռանկարներ: Ղազարոսի հաջողություններով եւ ձեռքբերումներով հպարտացող հայրն արդեն հաշտվելու եզրեր է փնտրում որդու հետ: «Օրինավոր մարդ» դառնալու համար գրողը, հարկավ, ամենից առաջ պարտական էր Ենֆիաճյանին եւ հենց նրա միջոցով է ծանոթություն հաստատում ժամանակին համբավավոր «Կռունկ» ամսագրի սրբագրիչ Պերճ Պռոշյանի հետ, դառնում նրա գրաշարը: «Մի երես մեր նորագույն պատմությունից» կենսագրական տվյալներ բովանդակող հոդվածում Աղայանն արտահայտվել է ժամանակի գրական կյանքում կարեւոր նշանակություն ունեցող թերթերի եւ պարբերականների մասին. «Կռունկն» էր, որ ազատ էր երկու ծայրերից, մա ճիշին ճանապարհ բռնած, Հայոց աշխարհի իրաքնակ եւ տարաքնակ որդոց մեջ տարածում էր ազգային-բարոյական լուսավորության պահանջն ու կարիքը» (h. 4, էջ 283):

Աղայանը Պռոշյանին հիշում էր դեռեւս Ներսիսյան վարժարանում ուսանելու ժամանակներից, երբ վարժապետները Պռոշյանին էին մատնացույց անում՝ իբրեւ դպրոցի ուսյալ եւ առաջադեմ սանի: Հուշագրողը բարձր է գնահատում Պռոշյանի վաստակն ու ներդրումը ազգային գրականության զարգացման գործում. «...Պռոշյանը մեծ ծառայություն է մատուցել ազգային գրականությանը եւ կրթությանը, եւ ազգը պարտական է նրան պահպանելու, պարտական է ապահովելու նրա ծերության օրերը կենսաթոշակով» (h. 4, էջ 346):


Թիֆլիսում սովորելու տարիներին ժամանակի հոգեւոր առաջնորդներից Ներսէս կաթողիկոսի մասին գրողը կտրուկ էր արտահայտվել՝ մասնավորապէս ընդգծելով նրա ինքնակալ կառավարման ձեւը, ամեն ինչին միջամտելու նրա հակվածությունը եւ պաշտոնների նշանակումները:

Տպարանում աշխատելու տարիներին կյանքի բովով անցած Աղայանն առանձնանում է իր աշխատասիրությամբ, ընթերցասիրությամբ, ստեղծագործելու տաղանդով: Նա դառնում է տպարանի հիմնադիր՝ Ենֆիաճյանի սիրելին, մի կարճ ժամանակահատվածում տպարանական հասարակ գրաշարից դառնում վարպետ: Թիֆլիսյան այդ տարիները նպաստում են գրական-մտավորական շրջանակների հետ նրա շփումներին, մոր ծանոթություններին: Աղայանը ծանոթանում է նշանավոր սայաթնովայազետ Գետրոզ Ախվերդյանի, բանասեր Գարեգին Սրվանձոյանցի հետ: Ժամանակաշրջանի հայկական իրականության մասին խոսելիս նա նշում է, որ հունձ շատ կար, բայց մշակը սակավ էր, իսկ աճող հավատացյալների համար հովիվ չկար:

Տպարանական տարիները հատկանշվում են գրական առաջին ստեղծագործությունների տպագրություններով:

Շարունակելի

ԱՆՏԱ ԹՈՐՈՍՅԱՆ



«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի բացառիկը՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության եւ Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը լույս է ընծայել բացառիկ համար՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության եւ Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակներին:

Բացառիկում տեղ է գտել հոբելյանական տարվա առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, ինչպէս նաեւ՝ բազմապիսի հոդվածներ: Մի շարք հոդվածներ նվիրված են 100-ամյակի տոնակատարություններին եւ Մայր Աթոռում ու Սարդարապատի հուշահամալիրում կազմակերպված միջոցառումներին:

Վերլուծական հոդվածներով ներկայացվում է Հայոց եկեղեցու դերակատարությունը հիշյալ տարիներին եւ մասնակցությունը Հանրապետության կայացման գործում, անցկացվում պատմական զուգահեռներ Ավարայրի եւ Սարդարապատի միջեւ: Հոդվածներում մասնավորաբար ուշադրություն է դարձվում պատմական իրադաժություններին, դրանց նորովի ներկայացմանը եւ լուսաբանմանը: Առանձին հոդվածով ներկայացված է 1918-1920 թթ. պատմական իրադարձությունների անդրադարձը ժամանակի հայ գրականության մեջ:

Բացառիկում ներկայացված են նաեւ 100-ամյակի առիթով Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից հրապարակված աշխատությունները:

ԱՄՍԱՌԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



Սկիզբը՝ էջ 6

Ֆիլմեր նայեք ձեր երեխաների հետ, տեսե՛ք ինչ են նայում ձեր երեխաները, միասին անցկացրեք այդ ժամանակը: Ձրուցե՛ք իրար հետ, զրուցե՛ք ու լռե՛ք: Հաճելի է, երբ որ տանն են եւ չեն խոսում ու գործ են անում. ասե՛ք՝ մայրը լռի է մաքրում, երեխան կողքը խաղում է կամ կորդում կամ իր հեծանիվը նորոգում եւ այլն... Եվ սեր են զգում այդպէս, թեկուզ եւ չենք խոսում: Հասկապէս եթե խոսելու ենք ու կռվելու, ավելի լավ է՝ չխոսենք: Բայց ասե՛ք իրար մի երկու խոսք, որ մոռացել ենք ասել ձմռանը, քանի որ չէինք հանդիպում:

Չտրտնջանք ամռանը, չընկճվենք, չտրվենք մեղսալից բաների: Եվ ովքեր դեռ չեն որոշել՝ ուր գնալ հանգստանալու, թող կռվեն, թե ով է մյուսին գիշելու. «Ո՛ր ես ուզում՝ գնանք, սիրելիս: Գնանք ձեր գյուղ», եւ կինն ասի. «Չէ, մեր գյուղ՝ չէ, այս տարի ձեր գյուղ կգնանք, սիրելի՛ ամուսինս»: Այսինքն՝ մեկը թող զոհողություն ամի մյուսի համար.

եւ ոչ եսասիրաբար ու հաշվարկներով, համուժ-գումարումներով. «Մերոնց մոտ հինգ օր մնացինք, իսկ ձերոնց մոտ՝ վեց, եւ ինչով են պակաս», կամ. «Ձերոնք ինձ չեն սիրում, ծուռ հայացքներով են նայում» եւ այլն: Սա ամառ չեղավ: Գեղեցիկ անցկացնենք մեր ամառը:

Եվ եթե երեխաներն ուզում են մեմակ, առանց ծնողների որեւէ տեղ գնալ հանգստանալու, կռիվ մի արեք: Դու, որ պատանի ու երիտասարդ ես, իմացիր, որ չես կարող առանց ծնողներիդ համաձայնության որեւէ տեղ գնալ մեմակ: Ծանոթացրի՛ր ընկերներիդ ծնողներին հետ, շահիր նրանց վստահությունը: Եվ դուք, հայր եւ մայր, ճանաչե՛ք ձեր երեխաների շրջապատը, ընկերներին: Ձմռանը առիթներ գտիր եւ հրավիրիր նրանց ձեր տուն: Մի օր քաղցրավենիք պատրաստիր ու ասա՝ «Այսօր ֆուտբոլը մեր տանը կնայե՛ք», եւ այլն: Այդպիսով կճանաչես քո երեխայի ընկերներին. ոչ, սակայն, խորամանկորեն՝ ձգտելով իմանալ նրանց գաղտնիքները,

այլ պարզապէս ասա՝ երեխայիդ. «Ուզում եմ ճանաչել ընկերներիդ, իմանալ՝ ում տուն ես մտնում, ինչ մարդկանց հետ ես շփվում, արձակուրդներին ում ամառանոց ես ուզում գնալ հանգստանալու, ովքեր են այդ ընտանիքները, նրանց ճանաչում ենք»: Բնականաբար, չենք կարող թույլ տալ մեր երեխային՝ ուր ուզում է գնալ: Բայց եթե կա փոխադարձ վստահություն, անկեղծություն, պարզություն, եթե երեխան զգում է, որ հայրն ու մայրը գնահատում են իրեն, հարգում իր շրջապատը, իրեն շարունակ անպատասխանատու, անհաս երեխայի տեղ չեն դնում, ամեն ինչ այլ կերպ է ընթանում: Պետք է գիտակցես, որ երեխայդ ըն ինչ-որ պահի հասունանում է, եւ դու էլ օգնիր նրա հասունանալուն: Ծանաչե՛ք իրար, զրուցե՛ք իրար հետ, բացե՛ք ձեր սրտերն իրար առաջ, հասկացե՛ք իրար ու տեսե՛ք ձեր մեջ եղած ընդհանրությունը, այլ ոչ տարածայնությունները, տարբերությունները:

Այս ամենի մեջ, ինչ որ ասացի ձեզ, պետք է կարողանալ տարբերակում դնել: Ինչպէ՛ս պետք է անես դրանցից յուրաքանչյուրը, ինչ-քան: Եվ յուրաքանչյուր ոք թող իրեն նայի, իրեն օգնի եւ ոչ թե սկսի ուսուցանել ուրիշներին: Դու դարձիր այն դեմքը, այն զով ու վերածնված հոգին, որ քեզ մոտեցողը զովություն զգա ու ասի. «Ո՛րն է քո գաղտնիքը»: Եվ դու կասես. «Արի՛ ու տէ՛ս: Տէ՛ս, թե ինչպէս դարձա այսպէս երջանիկ. գնացի Եկեղեցի, սիրեցի Տիրոջը, սովորեցի աղոթել: Սա է իմ գաղտնիքը, սա է իմ զովությունը, իմ հոգու գեղեցիկ օդափոխիչը. այն զգացումը, որ Տերը սիրում է ինձ, Տերը գալիս է ինձ մոտ, ու ես ընդունում եմ Նրան: Եվ երբ վերադառնամ արձակուրդներից, կշարունակեմ զովություն ունենալ սրտումս եւ ուրախությամբ, կենդանությամբ, երախտապարտությամբ կասեմ Հիսուսին. «Տէր, շնորհակալ եմ Քեզնից այս ամառվա համար: Իսկապէս ուրախ ամառ անցկացրի,

որովհետեւ Քեզ հետ էի. Քեզ, որ գեղեցիկ գառունն ես ու ամեն ինչ ես իմ կյանքում»:

Եվ ովքեր հիշեն, թող աղոթեն նրանց համար, ովքեր չեն կարող հանգստանալ ամռանը, ովքեր չեն կարող գնալ ոչ մի տեղ, որովհետեւ զանազան խնդիրներ ունեն:

Ամեն դէպքում, կարծում եմ՝ այսօր մի փոքր զգացինք ամառվա համը: Ցանկանում եմ, որ ուրախ լինեք, որ զգաք Աստծու զովությունը, թույլ տաք, որ Նա մոտենա ձեզ, ու ձեզ թվա, թե դրախտում եք, թեկուզ եւ խեղդվեք շոգից, թեկուզ եւ քաղաքում լինեք ու լինեք այս աշխարհի դժվարությունների հորձանուտում: Ուր որ գալիս է Քրիստոս, Իր հետ ամառ է բերում:

Հունարենից թարգմանեց
Տաթևիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՂԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.09.2018 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ